ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ։

ԹԻՒ Զ. — ՇՐՋԱՆ Է. **1874** ՏԱՐԻ Է. — ՅՈՒՆԻՍ 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՀԱՆԴԵՐՁ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲՔ

(Շարունակութիւն)։

ԳԼ. ԽԷ.

Վերջին ժողով յԷջմիածին, որ է վերահաստատումն Կաթողիկոսութեան։

(Ամք Տեառն **1441**)։ — Ի ժամանակի յայսմիկ յաջորդեալ յԱթոռ Հայրապետութեանն Սսոյ Գրիգոր Մուսաբէկեանց յետ Յովսեփայ երրորդի Սսեցւոյ, և տեսեալ թէ իսպառ անշքացեալ է Աթոռն և ոչ գոն եպիսկոպոսք բաւականք ի Կիլիկիա, ձեռնադրէ առանց ընտրութեան զհինգ եպիսկոպոսունս և առանց կամաց եպիսկոպոսաց կողմանցն Կիլիկիոյ, որոց հաւանութեամբ եպիսկոպոսական ձեռնադրութիւն կատարէին Կաթողիկոսք. ընդ որ չորեցունց նոցա բողոք բարձեալ գրեն միաբանութեամբ առ ամենայն Արեւելեան Եպիսկոպոսունս և Վարդապետս, ծանուցեալ՝ եթէ աթոռն Սսոյ հասեալ է յանարգութիւն, եթէ ոչ աճապարեսջիք, ասեն, փոխել զսա, ի նախատինս լինիմք առաջի ամենայն ազգաց։

Ընկալեալ Արեւելեայց զթուղթս եպիսկոպոսացն Կիլիկիոյ և հասու լեալ, չհաճեցան ընդ ընտրութիւն Գրիգորի, զի առանց հաւանութեան չորից Աթոռոց և Առաջնորդաց նստեալ էր նոյն Մուսաբէկեան. և առ ի նորոգ ընտրել զոք Կաթողիկոս հաւանութեամբ Ազգին փոխադրելով և զԱթոռն յԷջմիածին, հրաւիրեն միաբան հաւանութեամբ ըզԳրիգոր յԷջմիածին. այլ ի չառնուլ նորա յանձն, խորհրդով Առաջնորդաց ազգիս և ձեռնտուութեամբ մեծամեծացն Հայոց ի Հայաստան ի Վիրս և հաճութեամբ խանին Երեւանայ, գումարեն ի Վաղարշապատ Արարատայ զմեծ ժողով եպիսկոպոսաց՝ եօթն և տասն անձանց, յորս էր Կաթողիկոսն Աղուանից

և Առաջնորդք չորից գլխաւոր աթոռոցն, որոց հաւանութեամբ լինէր ընտրութիւն Կաթուղիկոսի. և բազմութիւնք վարդապետաց, վանահարց, կրօնաւորաց և քահանայից և իշխանաց՝ թուով եօթն հարիւր անձանց. իսկ որոց առ ժողովն հասին թուղթք հաւանութեան եպիսկոպոսաց և վարդապետաց՝ էին տասն և վեց անձինք, ընդ որս և միաբանք Աղթամարայ աթոռոյն, խոստացեալ հնազանդիլ իշխանութեան այնմ, զոր ժողովն կոչեսցէ ի Հայրապետութիւն։

Ապա ի սմին ժողովի հաւանութեամբ ամենեցուն ընտրեալ ի Հայրապետութիւն Կիրակոս Վարդապետ Խորվիրապեցի՝ այր խոնարհ և խիստ ի ճգնողական վարս, ընդունի զօծումն Եպիսկոպոսութեան և Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց և հաստատէ զԱթոռն յԷջմիածին, յետ աստանդելոյ այնմիկ զամս իննհարիւր ութսուն և ինն յայլ և այլ տեղիս. որ և յայնմ հետէ և յապա զհետ լինի նորոգութեան և բարեզարդութեան Աթոռոյն։

ԳԼ. ԽԸ.

Յօրինեցուցէ ժողով յԷջմիածին վասն ընտրութեան նոր Կաթողիկոսի։

(Ամք Տեառն 1603)։— Դաւիթ հինգերորդ Կաթուղիկոս՝ յաջորդ Առաքելի, որ առ առաւելութեան պարտուց Աթոռոյ Էջմիածնի՝ կացոյց յաջորդ ինքեան զՄելքիսէթ Գառնեցի յԱղջոց վանաց յամի 1593, որք և գրեթէ միշտ թափառական շրջէին ի գեօղս և ի քաղաքս տառապեալք առ ահի պարտատերացն՝ մինչև և զարման կենաց ինքեանց ոչ գտանել. ապա ի սմին ժամանակի լուեալ՝ եթէ առաջնորդ Ամդայ Սրապիոն վարդապետ Մեծ կոչեցեալն ունի բազում ստացուածս ի հայրենի ժառանգութենէ, գրեն առ նա ի միասին Դաւիթ և Մելքիսէթ, զի նա եկեալ թեթևացուսցէ զպարտս Էջմիածնի, և յանձն առցէ զԿաթուղիկոսութիւն, յորմէ երկոքին նոքա ևս կամաւ հրաժարէին։

Ընկալեալ Սրապիոնի զայսօրինակ գիր նոցին, գնաց առ նոսա ի հին Ջուղայ. ուր ի ժողովի Կաթուղիկոսացն և Եպիսկոպոսաց՝ իբրև մեղադրական բանս ինչ խօսի առ նոսա, Մանուէլ եպիսկոպոս յարուցեալ անդէն զազմուկ և տարաձայնութիւն, ցրուին ամենեքին անտի և Դաւիթ և Մելքիսէթ գնան ի վանս Ստաթէի. այլ Սրապիոն կացեալ անդէն ի Ջուղայ և քարոզութեամբ աստուածային բանից հաճոյ լեալ յաչս Ջուղայեցւոց, առնուն զնա Ջուղայեցիք և ածեալ յԷջմիածին, կացուցանեն Կաթուղիկոս ժողովով Եպիսկոպոսաց, վարդապետաց և իշխանաց յամի 1603, կոչելով զանունն Գրիգոր երեքտասաներորդ։

Բայց Դաւիթ և Մելքիսէթ իբրև տեսին թէ այսպէս յիշխանութիւն ելեալ յաջորդեաց Սրապիոն-Գրիգոր և ծանրութիւն պարտուցն ևս դարձեալ մնաց ի վերայ ինքեանց, խորհեցան դիմել յԱսպահան առ բնակիչս տեղւոյն՝ որք գաղթեալքն էին ի Հայաստանէ, և ներկայանալ Շահաբբաս արքայի, և գտեալ զօգնութիւն ի նոցանէ յաղագս պարտուցն՝ վերստին հաստատուն ունիցին զԿաթուղիկոսութիւնն։

ԳԼ. ԽԹ.

Ութերորդ ժողով յԷջմիածին վասն ընտրելոյ զնոր Կաթողիկոս։

(Ամք Տեառն 1629)։ — Սահակ Կաթուղիկոս իբրև լուր եառ յերեսաց Հարկահանիցն ի Վանն վասն բազմանալոյ արքունի հարկացն ի վերայ Աթոռոյ Էջմիածնի, Հայք Ասպահանայ և Ջուղայու լուեալ զայն և ոչ կամեցեալ զաթոռն առանց Հայրապետի թողուլ ամայի, գրեն առ բնակիչս Մեծին և Փոքուն Հայոց, զի ընտրեսցեն ի կաթուղիկոսութիւն Էջմիածնի զՄովսէս Վարդապետ Սիւնեցի, զորոյ զփոյթ վայելչացուցանելոյ զԱթոռն լուեալ էին ի համբաւոյ՝ մանաւանդ զբարի անունն։ Ըստ որոյ և առ Մովսէս համանէին յայնմհետէ յերևելեաց ազգին թուղթք յորդորականք յամենայն կողմանց աշխարհին Հայոց և Պարսից և Վրաց և Յունաց և յայլոց տեղեաց, զի յանձն առցէ զՀայրապետութիւն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։

Այսպէս ստիպեալ Մովսէսի ի յորդորանաց Ազգին և յաւէտ ի սիրոյ սրտին իւրոյ, զոր ունէր ի վերայ Էջմիածնի, օծաւ Կաթուղիկոս մեծաւ հանդիսիւ ժողովով Եպիսկոպոսաց և բազմութեամբ վարդապետաց ի սուրբ Էջմիածին յամի Տեառն 1629։ Նա զհետ եղև ինչ ինչ շինութեանցն Էջմիածնի՝ սկսելոցն յաւուրց փակակալութեան իւրոյ։

ԳԼ. Ծ.

Առաջին ժողով յԵրուսաղէմ, ուր էջան երեքտասան կանոնք վասն Եկեղեցականաց։

(Ամք Տեառն 1651)։ — Գնալն Փիլիպպոս Կաթուղիկոսի ի Կոստանդնուպոլիս, գրէ Հ. Չամչեան, եթէ էր յաղագս խաղաղեցուցանելոյ նորա զխռովութիւնն ծագեալս անդր ի Կ. Պօլիս, ընդ մէջ ժողովրդոցն և պատրիարքաց յաջորդելոց մի զհետ միոյ։

Եկեալ նորա ի Ճանապարհ, դիմէ, ասէ, նախ յԵրուսաղէմ. ուր և ընդ Աստուածատուր Պատրիարքի տեղւոյն և Ներսէս Կաթուղիկոսին Սսոյ, որ դիպաւ անդանօր, արարեալ իջէ ժողով վասն բառնալոյ զանկարգութիւնն մտեալս յեպիսկոպոսունս յաշխարհին Հայոց, և կարգեալ զհետևեալ կանոնս։

Հակառակ թուին ուղիղ դատողութեան բանքս յառաջ բերեալք ի նոյն Չամչեանէ. զի երևի յայտնապէս զխկութիւն իրին խառնութեան պատրուակաւ ծածկեալ։

Նախ՝ եթէ գնալ Կաթուղիկոսին ի Կ. Պօլիս էր յաղագս խռովութեանցն ծագելոց ընդ մէջ ժողովրդոց և պատրիարքացն Պօլսոյ, ընդէ՞ր ապա դիմեաց նա նախ յԵրուսաղէմ։ Եւ

Երկրորդ՝ եթէ վասն բառնալոյ զանկարգութիւնն մտեալս յեպիսկոպոսունս աշխարհին Հայոց, գնաց Կաթուղիկոսն յԵրուսաղէմ, և արար անդէն ժողով և կանոնս եդ ի նմին, զի՞նչ հարկ կայր ապաքէն ընդհանրական Կաթուղիկոսին վասն բառնալոյ զանկարգութիւնս եպիսկոպոսաց աշխարհին Հայոց թողուլ զՀայրապետական Աթոռ իւր, ուր իւկըղբանէ և ցայն վայր վասն ամենայնի այնպիսեաց կարևորաց ազգի Հայոց լեալ էր ժողով բազում, անդամ և տարևոր ժամանակօք հեռացեալ յԱթոռոյ իւրմէ, և ի ծայրս իշխանութեան իւրոյ և Հայաս-

տան աշխարհի՝ վասն նոյն իսկ աշխարհին Հայոց առնել ժողով, կամ կանոնս կարգել վասն զանկարգութիւնն բառնալոյ։

Այլ զի զկարեւոր պատճառս գնալոյ Փիլիպպոսի ի Կ. պոլիս, այն է զխռովութիւնն յարուցեալս անդր ոչ յայտնի բացատրէ, ծածկելով զայն ի շնորհս Հռովմայ, որպէս եւ ոչ զանկարգութիւնն եղեալս ի մէջ Եպիսկոպոսաց եւն. մեք առանց ակնառութեան յայտնի գրեսցուք։ Ո՞չ ապաքէն արքունեակք գահին Հռովմայ յաճախեալ անդր ի Կ. Պօլիս, եւ ի կողմն իւրեանց շորթելով զանկարգամիտս եւ զթեթեւահաւատս ի Հայոց, ընդ մէջ միամիտ ժողովրդոց յարուցանէին նոքօք ըղխռովութիւն եւ ջանային զազգն եւս դարձուցանել ի պապականութիւն, որպէս եւ ի մերումս այսր ժամանակի՝ ոմանք ի պապականութիւն եւ ոմանք ի բողոքականութիւն եւն. շրջել ձգնին զեկեղեցին Հայաստանեայց։

Եւ զի Եպիսկոպոսունք Կաթողիկոսութեան Սսոյ մուտ գործեալ յայնժամ ի վիճակս ժողովրդոց պատրիարքական իշխանութեան Կ. Պօլսոյ, ընդարձակէին ինքնագլուխ ի ժողովուրդս պէսպէս անկարգութեամբք, եւ ջանային տակաւ առ տակաւ տիրապետել վիճակացն, եւ տալ ընդվզել զեկեղեցականս եւ զաշխարհականս ի հնազանդութենէ Մայր Աթոռոյ. որպէս զի դիւրաւ արկցեն զբռնացեալսն ի գուբ պապականութեան. առ այս եւ Փիլիպպոս Կաթուղիկոսի հարկ եղեւ ըստ խորհրդոյ ողջամտաց յԵրուսաղէմ անդր գնալ նախ, ուր ոչ պատահմամբ, այլ խորհրդով ոմանց անդ գտաւ եւ Ներսէս կաթուղիկոս Սսոյ, եւ առ ի փրկել զվիճակս ժողովրդոց ընդհանրական իշխանութեան իւրոյ, մանաւանդ թէ՝ Պատրիարգունք Կ. Պօլսոյ գոլով բնակեալ ի թագաւորեալ քաղաքն Կ. Պօլիս ընդ հզօր իշխանութեամբ Օսմանեան պետութեան գործէին զոր կամէին ի ձեռն Բ. Դրան. եւ Կաթուղիկոսական Աթոռն Էջմիածին էր յառարկայ յափշտակութեան իշխողաց երկրին, յորում Կաթուղիկոսունք Ազգիս չէին իսկ ձեռնհաս զկաթուղիկոսական իշխանութիւն իւրեանց հաստատուն ի կայի պահել, թող թէ զազգն համօրէն ի սփիւռս աշխարհաց. ջանային նոքա իւրաքանչիւր յիւր իշխանութիւն զազգն յաւելուլ, եւ զնախնական վիճակս ժողովրդոց ընդհանրական Կաթուղիկոսի ամենայն Հայոց յՕսմանեան անդր պետութեան իւրացուցանել. ուստի պարտաւորեցաւ երանելին Փիլիպպոս Հայրապետ զփոքրագոյնն երկուց չարեաց ընտրելով զեղծումն օրինաց՝ զիջանել իբր ի դաշնակցութիւն՝ ընդ Սսոյն, որպէս զի մարթասցի զառաջս առնուլ մեծամեծ վտանգաց՝ որ սպառնային, եւ կանոնաւոր առնել զապօրինի ձգտումն կաթուղիկոսին Սսոյ եւ պատրիարգին եւ այլոց, հրաւիրելով ի սէր Ազգի եւ Եկեղեցւոյ զամենեսին, եւ ի ժողովի անդ ընդ այլոց յօդուածոց կանոնացն անձարացեալ երանելին յանձն առեալ է, զի իւրաքանչիւրն միայն զիւրոյ վիճակի նուիրեալսն ձեռնադրեսցէ, թէ եւ ապօրինաւորապէս, այլ անշուշտ վասն խաղաղեցուցանելոյ զվրդովեալս եւ զիջուցանելոյ զհերձեհ պապականութեան. եւ վերադառնալով ի Պօլիս՝ որպէս երեւի զի Պատրիարքն ժամանակին ի կողմն պապականաց էր, հանեալ զնա ի

պաշտօնէ Պատրիարքութեան, կացուցանէ ի տեղի նորին զԵրեւանցի կամ զՄուղնեցի Յովհաննէս Վարդապետ զհարազատն դաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ։ Եւ ահա յօդուածք կանոնացն՝ որ եդան ի Ժողովի անդ, յայտնի ցուցանեն թէ յի՞նչ պատճառս են եղեալք, եւ որպէս շփոթեալ էին զկարգադրութիւն Եկեղեցւոյն Սսականք ի ձեռն մոլելոց ի կողմն պապութեան, քանզի ի Սսոյ ելեալք ի ձեռն քաղաքական իշխանութեան կարգեալ էին առաջնորդք վիճակաց, քանի՛ անարժանք գնացեալ ի Սիս ձեռնադրեալ լինէին յԵպիսկոպոս, եւ քանի՛ անարժանք թողեալ զիւրեանց վիճակն Եպիսկոպոսն գնեալ էին յայլս առնուլ զկարգ քահանայութեան կաշառօք, եւ սակս զառաջս այնպիսեաց առնուլ մարթելոյ՝ երանելին Փիլիպպոս արարեալ է զիջումն առժամանակեայ՝ զապագայն յանձնելով ի խնամս Տեառն։

Այսոքիկ են կանոնք եդեալք ի Ժողովի անդ։

ա. Երկու Աթոռք Էջմիածնի եւ Սսոյ սէր ունիցին առ միմեանս, եւ իւրաքանչիւր միայն զիւրոյ վիճակի նուիրեալսն ձեռնադրեսցէ։

բ. Եւ որ ձեռնադրելոց է, մի՛ իշխեսցէ առ այլ կաթուղիկոս գնալ, այլ առ իւրն։

գ. Առանց վկայութեան ժողովրդեան մի՛ ոք ձեռնադրեսցի եպիսկոպոս։

դ. Մի՛ ոք յեպիսկոպոսաց յափշտակեսցէ զվիճակ այլոց։

ե. Միոյ վիճակի մի՛ լիցին երկու առաջնորդք։

զ. Եպիսկոպոս մի՛ ձեռնադրեսցէ զոք յայլմէ վիճակէ։

է. Եպիսկոպոս առանց հրամանի կաթուղիկոսին մի՛ իշխեսցէ այլոց վիճակաց բռնութեամբ այլազգեաց։

ը. Մի՛ ոք ի վարդապետաց տացէ այլում իշխանութիւն վարդապետութեան, եթէ չիցէ կատարեալ հասակաւ եւ վկայեալ յառաքինութեան եւ յուսման։

թ. Քահանայն յիւրմէ յեպիսկոպոսէ ձեռնադրեսցի հաւանութեամբ ժողովրդեանն։

ժ. Եպիսկոպոսք եւ քահանայք մի՛ զըրկեսցեն զմիմեանս ի հասս՝ զորս առնուն ի ժողովրդենէ։

ժա. Երիցունք մի՛ յափշտակեսցեն ըզվիճակս (այս ինքն զծուխս) իրերաց։

ժբ. Երիցունք ի նշանադրութեան աղջկանց բազում աւուրբք յառաջ ծանուսցեն զայն ի մէջ եկեղեցւոյ, զի թէ գուցէ ինչ արգել՝ յայտնեսցի։

ժգ. Երիցունք, որոց վախճանեալ իցէ ամուսին, եթէ իցեն վկայեալ ի պարկեշտութեան եւ իցեն ծեր, եւ ունիցին մանկունս սնուցանելոյ, կայցեն յեկեղեցւոջ. ապա թէ ոչ՝ գնասցեն ի վանս։

ԳԼ. ԾԱ.

ԻՆՆԵՐՈՐԴ ԺՈՂՈՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՎԱՍՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ։

(Ամ Տեառն 1655)։—Յետ մահուան Փիլիպպոս Կաթուղիկոսի՝ միաբանքն Աթոռոյ Էջմիածնի եւ եպիսկոպոսք եւ վարդապետք, որք եկեալ էին ի Թաղումն Հայրապետին, Ժողով արարեալ յետ աւուրց ինչ ընտրեն զՅակոբ Վարդապետ Ջուղայեցի ի Կաթուղիկոսութիւն, եւ յութերորդումն աւուր Ապրիլի ի սոյն

ամի 1655, օծանեն զնա յաթոռ Հայրապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, որ առաքինի վարուք իւրովք յամենայն ի գործս իւր երևեցաւ արդիւնաւոր և բարեկարգիչ աթոռոյն։

ԳԼ. ԾԲ.

Տասներորդ ժողով յէջմիածին վասն նոյն իրին։

(Ամք Տեառն 1707)։—Յորժամ վախճանեցաւ Նահապետ Կաթողիկոս Եդեսացի յամի 1705, ոչ ումեք յաջողեցաւ ամբառնալ յաթոռ Հայրապետութեան գրեթէ աւելի քան զամ մի. որում ապա յաջորդեաց Տէր Աղէքսանդր Ջուղայեցի ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց յէջմիածին, յամի Տեառն 1707,

ԳԼ. ԾԳ.

Առաջին ժողով ի Կոստանդնուպօլիս, որ ընտրեցաւ Կարապետ Կաթողիկոս։

(Ամք Տեառն 1726)։—Յաւուրս խռովութեանց աշխարհին Արարատայ ի սմին ժամանակի վասն պատերազմաց ընդ մէջ Օսմանցւոց և Պարսից, Աստուածատուր Կաթողիկոս Համադանցի ոչ կարելով հանապազ նստիլ յէջմիածին՝ շրջէր թափառական. և առ այս առիթ լեալ նորա յՕշական գեղջ, յաւուր միում իբրև ելանէ ի տանիս առ դիտելոյ զխաւարումն լուսնի, անկանի ի վայր գլխիվայր, և յետ աւուրց փոխի յաստեացս։

Զայս մահ Աստուածատրոյ լուեալ Յովհաննու Պատրիարգի Կոլոտին կոչեցելոյ ի Կոստանդնուպօլիս, առ ինքն ժողովեալ զեպիսկոպոսունս և զվարդապետս և զերևելի իշխանաւորս քաղաքին, ամենեցուն հաւանութեամբ ընտրեն զԿարապետ Վարդապետ Զէյթունցի Արքեպիսկոպոս և առաջնորդ Պաղատիոյ, այր զգօն և գովանի վարուք. զոր հրաւիրեալ անդ ի Պօլիս՝ օծանեն զնա ի Կաթողիկոսութիւն Աթոռոյ Էջմիածնի արքունի հրամանաւ երկոտասան եպիսկոպոսօք մեծաւ հանդիսիւ յեկեղեցւոջ սրբոյ Աստուածածնի ի 27 աւուր փետրվարի յամի 1726. որ յետ երկուց ամաց անագան ուրեմն դարձաւ յէջմիածին յԱթոռն Հայրապետական։

ԳԼ. ԾԴ.

Երկրորդ ժողով ի Կոստանդնուպօլիս վասն ընտրելոյ զնոր Կաթողիկոս։

(Ամք Տեառն 1753)։—Մինաս Կաթողիկոս յաջորդ Ղազարու իբրև վախճանեցաւ յամի Տեառն 1753, յետ վարելոյ զիշխանութիւնն զամ մի և զամիս Բ. միաբանք Աթոռոյն ազդ արարեալ ի Կոստանդնուպօլիս, խնդրէին, զի կամ Յակովբ Պատրիարգ և կամ Սահակ Վարդապետ ահաղին ընտրեսցին ի կաթողիկոսութիւն։

Այլ Յակոբ Պատրիարգ ոչ հաճեալ ընդ ընտրութիւն իւր ի միաբանից Աթոռոյն, արար ժողով յաղագս ընտրելոյ զոք ի Հայրապետութիւն. ուր ապա ընտրի հաւանութեամբ ժողովոյն Աղէքսանդր վարդապետ Կոստանդնուպօլսեցի Գարագաշ կոչեցեալ. որ ելեալ անտի և եկեալ յէջմիածին՝ օծաւ կաթողիկոս ի յաջորդ

ամի ի 1754 ի 6 Մարտի՝ յետ տասն ամսոյ վաղճանին Մինասայ։

ԳԼ. ԾԵ.

Մետասաներորդ ժողովն յԷջմիածին վասն ընտրելոյ նոր Կաթողիկոսի։

(Ամք Տեառն 1763)։ — Երբեւ վաղճանեցաւ Յակոբ Կաթողիկոս Շամախեցի յետ Հայրապետութեան իւրոյ զամս երեք եւ ամիս ութ, եղեւ ժողով հնգիցս վասն ընտրութեան նոր Կաթողիկոսի յաթոռն Էջմիածին, բայց եւ ոչ ոք ընտրեցաւ, զի ժողովն ընդհանուր գրեթէ զայլեայլ անձինս ի մէջ բերէին ընտրութեանն. վասն որոյ եւ ոչ ումեք յաջողէր վիճակն։

Այլ ի հինգերորդ գումարման ժողովոյն Յարութիւն վարդապետ Բասենցի յառաջի արարեալ զՍիմէոն Վարդապետ Երեւանցի, յառնէ ի տեղւոջէ եւ համբուրէ զաջ նորա, ասելով՝ կեցցէ հոգեւոր տէր մեր Սիմէոն կաթողիկոս. ընդ որ ամենեքին հաւանեալ՝ ընտրեցին զնա եւ օծին Կաթողիկոս առանց հաւանութեան երեւելեացն Պոլսոյ, որոց կամօք եւ գիտութեամբ լինէր ընտրութիւն Կաթողիկոսաց։

Ապա Սիմէոն Կաթողիկոս յետ օծման իւրոյ գրեալ առ Յակոբ Պատրիարք եւ առ մեծամեծս Պոլսոյ՝ յայտնեաց նոցա զընտրութիւն իւր եւ զօծումն, ընդ որ հաճեցան նոքա եւս։

(Մնացեալն է յետագայս)։

ԱԲԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն)։

Ս. Սահակ եւ Մեսրովբ երանելեաց ազնիւ բաղձանաց եւ բազմարդիւն վաստակոց ազգի ազգի արդասիքներ հետզհետէ առաւել արդիւնաւորուեցան եւ յարատեւեցին Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ՝ ջանիւք եւ անխոնջ հետամտութեամբ իւրեանց աշակերտաց եւ յաջորդաց՝ առաւելապէս իմն ծաղկեցուցանելով եւ պայծառացուցանելով զԵկեղեցին, մինչեւ որ՝ ըստ պահանջման ժամանակին՝ այլ եւս եկեղեցական ինչ ինչ բարեկարգութիւնքը՝ երգեցողութիւնքը, արարողութիւնքը եւ կանոնական պատուիրանքը յաւելացուցին եւ գեղեցկաձեւ սահմանեցին, յաճախեցին Հայկական գրականութեան հարստութիւն եւ շքեղութիւն պարգեւելոյ, եւ իւրեանց երանելի Վարդապետաց եւ վարժապետաց ձգունքը քան զնոսա բեղմնաւորեցին յօգուտ եւ ի յառաջադիմութիւն ժողովրդեան թէ ըստ կրօնականին, թէ ըստ բարոյականին եւ թէ ըստ մտաւորականին։

Որքան միջոցներն եւ ժամանակն կընէրէին նոցա, ոչինչ աշխատութիւն չէին խնայած Եկեղեցւոյ պայծառութեան եւ Ազգի յառաջադէմ եւ բարեկեցիկ յարատեւութեան եւ գոյութեան համար։

Ինչպէս Սահակ եւ Մեսրովբ երանելեաց, նոյնպէս սոցա աշակերտաց եւ եկեղեցւոյ վարդապետաց ջանքերն յաւէտ կեդրոնացած էին գլխաւորապէս Եկեղեցւոյ պայծառութեան եւ ժողովրդեան հարազատ օգտին եւ բարեկեցութեան, ազ-

գային-կրօնական դաստիարակութեան և մտաւորական զարգացման միջոցաց վերայ, այնքան որ՝ Եկեղեցւոյ և Ժողովոց կանոնք ըստ մեծի մասին սոյնպիսի նպատակաց ուղղութիւնք ունէին և կհետևէին միշտ՝ ինչպէս Ազգային և Եկեղեցական պատմութիւնք կենդանի վկաներ կըհանդիսանան, և բաւական հոգևորական և աշխարհական անձինք երիտասարդական հասակին մէջ աշխոյժ և հոգեվառ եռանդով աշխարհէ աշխարհ շարունակ կըթափառէին մանաւանդ ի Յունաստան, և ուր որ ի ժամանակին ուսումն, գիտութիւնք ևն. ծաղկեալ էին, անդ կաշակերտէին և բարի օրինակներ և հրահանգներ և կարգադրութիւնք ևս քաղելով և ուսանելով՝ կբերէին կտարածէին ի Հայս, և այս առիթով աւելի համակրութիւն և սէր նուիրած էին Յունաց։

Սակայն աստի գոգցես աշխարհավարութեան ուշադրութիւնը գրգռեցաւ և Պարսից նախանձը տակաւ առ տակաւ բորբոքելով և յուզուելով՝ ատելութիւնը սաստկացաւ՝ կարծել տալով որ Քրիստոնէական կրօնակցութիւնն թելադիր կհանդիսանայ այս համակրութեան, և դաւադիր դաշնակցութիւն կկազմուի ընդդէմ իւրեանց (Պարսից). ուստի նախ Հայոց քաղաքական իշխանութեան տապալումը փութացնելոյ աշխատելով՝ երևակայեցին, որ յետոյ ևս կյաջողէին Հայոց Քրիստոնէական կրօնը մոգութեան պաշտաման զոհել տալ և Հայութիւնը ի մի ձուլել ընդ պարսկութեան։

Այսպէս ուրեմն պարզ կրօնասիրական եռանդուն ջանից և ուսումնասիրական աշխատութեանց համար անակնկալ այսպիսի մի ծանր հետևանք յառաջանալէն՝ Պարսից նման կասկածոտ և խորամանկ մի դրացի հզօր ազգի մեքենայութեանց տեղի տուին և ոչ սակաւ տագնապներ տեղացին Հայաստանեայց Եկեղեցւոյ գլխոյն վերայ, այնպէս որ՝ Պարսից վերջին մի ահեղ փորձին ենթարկուելով՝ **450—54** թուականաց դառնավիշտ միանգամայն պանծալի և փառաւոր անցքերը կրեց Եկեղեցին։

Հինգերորդ դարու ժամանակին ուսումնասէր երիտասարդութեան վառվռուն միանգամայն անխոհեմ շարժմունք աւելի գրգիռ և տեղիք տուած էին այսպիսի ծանրագէտ հարուածոց, որք մինչև անգամ ներքին երկպառակութեան դուռ բացած էին, ոմանք Յունաց՝ և այլք Պարսից համակրութիւն *) ցուցանելով։

Բայց կարժէի՞ն։ Եւ ի՞նչ հարկ կար։

Գոնէ ժամանակին նենգամիտ Յոյներ անկեղծ վարուէին Հայոց հետ և անկեղծ համակրութիւն և սէր փոխանակէին, Պարսիկներն այնքան չէին համարձակեր Հայաստանեայց Եկեղեցին վտանգելոյ հա-

---

(*) Ներկայ ժամանակիս մէջ Հայ երիտասարդաց ոմանց ի Գաղղիա, սակաւուց յԱնգղիա, այլոց ի Գերմանիա ևն. գիտութեանց պարապելով և ուսումն ստանալով՝ ևս և իրերահակառակ գաղափար և համակրութիւն ցուցանելով գործած յուզմունքները եթէ կշռեմք և բաղդատեմք, դիւրին կհասկացուի Հինգերորդ դարու ուսումնասէր երիտասարդութեան ընթացքը։ Թողումք զի այժմեանք սակաւաթիւ և ոչ—եկեղեցական կուսակցութենէ են, և Գերմանիոյ և Գաղղիոյ ևն. երկիրներու մէջ բնակիչ Հայք գրեթէ չկան, կամ թէ խիստ աննշան են։

մար մեքենայութիւններ լարելոյ։ Սակայն քանի մեծ դժբաղդութիւն էր Հայոց նըկատմամբ՝ զի մի կողմանէ՝ Յունաց մէջ կրօնական հերձուածներ յաճախելով և տուայտանալով՝ և միւս կողմանէ՝ կրօնամոլութիւնն ևս դաւադիր աջակցելով՝ Հայոց դէմ՝ փոխանակ օգնութեան և կարեկցութեան՝ դժոխային սպառնալիքներ կորստային, միանգամայն չտեսան իւրեանց գլխոց վերայ աճապարած արկածները ևս, որով պարսկական աշխարհավարութիւնն որոգայթից մէջ գլտորեց (Յոները) և զբաղեցուց՝ ակնունելով որ՝ Հայք ևս տկարացած և անօգնական մնացած լինելով՝ նախ Հայերը ի մի կըձուլէ, և ապա Յոները։

Այսպիսի մեքենայութեամբք և աշխարհավարութեամբ Հայոց մէջ երկպառակութեան որոմները ցանուած էին, և հետզհետէ երկու հզօր կուսակցութիւն (պարսկական և յունական կողմնակցութիւնք) գոյացան և իւրաքանչիւրն իւր նպատակին հասնելոյ համար՝ կամ թէ Ազգի և Եկեղեցւոյ փրկութիւնը այս կամ այն կողմ երևակայելով, սկսան զիրար ատելոյ և ներքին պատերազմներու սարսափելի և եղբայրասպան տեսարանները ներկայացնելոյ։

Գրեթէ Հինգերորդ դարու կիսէն սկսեալ այս ներքին պատերազմը ահեղ իմն կերպիւ, և երկու կուսակցութիւնք ևս այս միջոցիս յանդուգն զինուելով ընդ դէմ միմեանց՝ միայն անձնական իրերակործան կիրքեր ամեն տեղ կտիրէին, և մինչև կրօնը վտանգի հանդիպեցաւ. ըստ որում Յոներն օգնելոյ անկարող գտնուելով՝ միանգամայն դաւադիր, Պարսիկք հազիւ բարեպատեհ ժամ գտած կարծեցին և յարձակման նախագիծը արդիւնաւորել չդանդաղեցան՝ ազգի ազգի նեղութիւններ և հարստահարութիւններ պատճառելով, և խորամանկութեամբք լարուած որոգայթները ի գործ դնելով Հայոց քրիստոնէական կրօնը, եկեղեցին, միանգամայն Հայութիւնը ջնջելոյ համար։

Սակայն՝ դարձեալ Հինգերորդ ամենանշանաւոր դարուն մէջ՝ երանելի Ղևոնդեանց և քաջ Վարդանանց զօտեպինտ շահատակութիւնք և անձնազոհ նահատակութիւնք խիզախելով ամեն վտանգներու և որոգայթից դէմ՝ գրեթէ վերջ տուին օտարաց ամեն մեքենայութեանց, և եկեղեցին և ազգը կրկին ազատեցին տագնապալից և ամենադաժան մի որոգայթէ, և առաւել փառաւոր ծածանեցաւ Հայութեան դրօշակը։

Ահաւասիկ ըստ այսմ Ս. Սահակայ և Մեսրովբայ բազմարդիւն ճգանց արդիւնքներ մօտ ժամանակի մէջ այսպիսի նշանաւոր մի փայլ ևս ստացան և հասկացուցին իւրեանց ջանից արժէքը Հայաստանեայց եկեղեցւոյ՝ ազգի և լեզուի պահպանութեան և հաստատման գոյութեան համար. որում այնպիսի ժամանակի և ազգի այն տկար վիճակին մէջ՝ մի հզօր և դրացի ազգի և տէրութեան մեքենայութիւնք և յարուցած ճակատամարտքն անգամ չիշխեցին աւելի հարուածներ տալոյ։

Այն միայն ներգործեցին Վեցերորդ դարուն մէջ Հայկական դպրութեանց մի այլ տեսակ յեղափոխութիւն տալոյ, և ուսումնասիրութեանց համար երթևեկութիւնքը ընդհատուեցան՝ Հայոց մէջ

Յունաց դէմ մեծ ատելութիւն և հակակրութիւն տարածուելով, և ուսմանց ասպարէզը անձուկ շրջանի մէջ մնաց. բայց ոչ երբէք ազգային և կրօնական հարազատ դաստիարակութեան և եկեղեցւոյ պայծառութեան համար թուլութիւն պատճառեցին, չնայելով՝ որ թէպէտ երբեմն թշնամիք ընկճէին և ամօթապարտ կդադարէին չարամիտ մեքենայութիւններէ, սակայն երբեմն միմեանց կյաջորդէին ուրիշ թշնամի ազգեր ևս տիրապետութեան և երկրակալութեան հետևելով, նոքա ևս կյաճախէին կրօնից և ազգութեան դէմ մարտնչելոյ, թէ և միշտ անյաջող կըլնէին:

Ինչպէս Հինգերորդ, նոյնպէս Վեցերորդ և Եօթներորդ դարուց մէջ այսպիսի տեսարաններու նկարագրութիւնք լիովին կաւանդուին մեր ազգ. և եկեղ. պատմութեանց մէջ, յորս կերևին դարձեալ եկեղեցւոյ և եկեղեցական պաշտօնէից վիճակ և ջանքեր, որք ոչ մի արկածից առջև վհատիլ չուսեցան, և ընդհակառակն անխոնջ և առաւել ոգևորուած կգործէին, և միշտ ազգի և եկեղեցւոյ օգուտը կխորհէին և կպաշտպանէին:

Բագրատունեաց իշխանութեան պայծառ ժամանակին մէջ անգամ այնքան արդիւնաւոր չեղաւ եկեղեցւոյ վիճակը՝ որքան հալածանաց միջոցին. և եկեղեցական նուիրապետութիւն միշտ և ամէն ժամանակ իւր պարտքը քաջ կճանաչէր և ի գործ կդնէր ամէն տեսակ ներողութիւններ և հարստահարութիւններ կրելով հանդերձ:

Որպա մի նշանաւոր ապացոյց լինելոյ համար թող ընթերցողն ուշադրութեան և բաղդատութեան առնու Եօթներորդ դարու մէջ Հայոց եկեղեցւոյ վիճակը, և թէ եկեղեցական նուիրապետութիւն և ժողովուրդ ինչպէս սիրով միացած էին և կմխիթարէին զմիմեանս, — ինչպէս նա և յիշեալ դարուն մէջ (ի 645 թուին) Շ. Ժող. կոչեցեալ Ներսէս Կաթուղիկոս Եկեղեցւոյ և Ազգի օգտին համար հոգացած միջոցին՝ Դունայ Հինգերորդ Ժողովոյն մէջ երրորդ յօդուածով յիշեցոյց ազգային դաստիարակութեան նշանակութիւնը և անհրաժեշտութիւնը՝ ևս և պարտաւորութեանց մէջ սահմանադրեց, որ "Եպիսկոպոսն այցելութիւն արասցէ ի վիճակի իւրում ի վանորայս, ի գեղօրայս, և ի հիւանդանոցս,, ևն, ինչպէս որ ի նախնեաց հետէ ևս կարգաւորուած էր, որ և յաւէտ ամէն Եպիսկոպոսաց միանգամայն եկեղեցւոյ ամէն պաշտօնէից մեծ պարտաւորութիւններէն գլխաւորագոյնն էր և է ամէն ժամանակ և ամենայն տեղ:

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
Ի ՎԵՐԱՅ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԻ
ՆԱԽԿԻՆ ՀԱՅՈՑ.

(Շարունակութիւն:)

Ժ. Գ. — Բաց ի երկրի խնամակալ չաստուածներից ժողովուրդը ունէր նա և իւր մասնաւոր չաստուածութիւնքը, որ էին մի

և նոյն ժամանակ առարկայ երկիւղի և յուսոյ: Առաջ ընդունում էին մի աստղի կամ կատարիչ ճակատագրաց, որ կոչում էին Գրող այս ինքն [illegible]: Արամազդ նորան յանձնել էր հսկելու մարդկանց վարմունքին և տեղեկագրել կենաց մատենի մէջ նոցա բոլոր վատ և բարի գործերն. քրմերն տալիս էին նորան նաև Արամազդի ատենադպիր մականունն և կարծել էին տալիս ժողովրդեան թէ՝ նա է որ գալիս էր ճակատագրից սահմանուած կեանքի վերջին ժամանակում բարձրացնել հետզհետէ ոգիներն և նորանց տանել իւր արձանագրի հետ ի միասին երկնային ատենի առաջ՝ լսելու համար յետոյ վերջին դատաստանն նրանց ամեն մէկի վերայ: Վաղարշապատ քաղաքի մօտ շինուած մի աւանում կար մի մատուռ ընծայուած այս գրող աստուծուն, որին կոչում էին Դուռ: Այն քրմերն՝ որ ծառայում էին այդ մատուռին՝ պահանջում էին ճանաչել ապագան և մեկնել երազն՝ խորհրդակցելով այդ աստուծոյ պատգամի հետ: Այն համբաւով՝ որ նոքա ստացել էին այդ գիտութեան մէջ, այն աւանն ուր որ նոքա բնակվում էին՝ կոչուած էր Նրբաղմոյն, որ նշանակում է Երկրի Թէ-նող*):

ԺԱ.—Մի ուրիշ ոգի՝ կոչուած Ղ՚է-ռող ցուցանում էր մի երկակենցաղ (Ջրային և հողային) աստուածութիւն, որ բնակվում էր երբեմն երկրի և երբեմն ջրերի վերայ: Նա նախագահում էր գետերի առատութեան, դաշտերի պտղաբերութեան, առողջապահութեան, վաճառականութեան, երջանկութեան և օգտաւէտ ձեռնարկութեանց յաջողութեան վերայ: Մի անգամ տարին նա երևումէր մի քանի մարդկանց՝ որ իրեն հաճոյ էին թուել և այս պատահումէր գարնան սկզբում: Այս երկրի պառաւ կիներն այսօր ևս հաւատումեն նրան և պատմում են վէպեր ի մասին այդ ժողովրդական աստուծոյ ազդու զօրութեանց:

ԺԲ.—Մի երրորդ աստուածութիւն կոչուած Յաւերժահարսն, այս ինքն մըշտընջենաւոր հարս, էր գեղեցիկ սեռի պահպանիչ աստուածուհին. կարծում էին որ իւրաքանչիւր ամուսնացած կին ունէր իւր անձի համար պահապան մի Յաւերժահարսն և համարում էին որ այս աստուծոյ թիւն պիտի անհամար լինէր: Ըստ կարծեաց ժողովրդեան՝ այս տեսակ յաւերժահարսները միշտ աներևութաբար ներկայացած էին ամուսնական սենեակների, լուացման, հոտաւէտ, և տիկնանց զարդարանքի ծառայող տեղերում: Նոքա նախագահում էին ծննդաբերութեան և ծննդեանց ցաւերին: Մտն էին գալիս հասարակօրէն պարտէզների, անտառակների և աղբիւրների կողմում, ընկերանում էին կանանց՝ նորանց բաղնիս գնալու ժամանակ: Բազում Հայ կանայք կարծում են դեռ ևս այսօր այս ցնորական էակի գոյութեան վերայ, համարում են որ այս աստուածուհւոյ ամենահաճոյ տեղն բաղնիքն է: Պատմում են հազար տեսակ զըւարճական դիպուածներ և վէպեր պարահանդէսի, հիացուցիչ երաժշտութեան, շնորհաց և այն փայլուն միւսութեան վերայ, որ այս աստուածութիւնքն ունէին

(*) Ձեռագիր № — 51. Թերթ 269

հասարակօրէն բաղնիսներում, եռանդով տենչում են նոցա վիճակը, և նորանց կոչում են յատկապէս Փէղնէ ողէնէք, որ ասել է ըստ գրականութեան՝ մեզանից աւելի երջանիկ էակներ. ըստ նախկին սովորութեան յարատևաբար պահուած մինչ մեր օրերն՝ Մեծ Հայաստանի բազում գաւառների կանայքն՝ անում են տարին երկու անգամ մի տեսակ ևս Կուռնոսեան տօներ ի պատիւ այդ չաստուածոց: Այդ լինում է հասարակօրէն Մայիս և Հոկտեմբեր ամիսներում, յորում ժամանակի սովորութիւն ունին տօնել այդ քաղաքային տօներն իւրեանց մէջ բաղնիսների շրջապատում: Այդ օրերում արգելում են մարդկանց մտանել ի բաղնիս՝ որ միայն սահմանուած է իւրեանց համար, և այն տեղ միայն կանայք և աղջկունք կարող են ներս գնալ: Մի քանի տեղերում մուտքն թոյլատրուած է նա և երկոտասանամեայ կամ հնգետասանամեայ տղայոց, որք գալիս են իւրեանց մօր մօտ: Ժողովը սկսում է առաւօտեայ տասը ժամին և տևում մինչ ի մտանելն արեգական և կամ երբեմն աւելի ուշ, անց են կացնում իւրեանց ժամանակը պարի, երաժշտութեան, լուացման և ուտելեաց մէջ. բաղնիսների զանազան սենեակներն՝ որ հասարակօրէն շատ ընդարձակ են, որոշուած է այդ տեսակ զուարճութեանց համար: Իւրաքանչիւր կին բերել է տալիս իւր տունից համեղ կերակուրներ, և ընտիր ըմպելիքներ, բայց բոլորն դրվում է մի հասարակաց սեղանի վերայ, և ժողովուած կանայքն ուտում են նաև առանց խտրութեան: Այլ ժամանակներում կանայք կրում են մի տեսակ գոգնոց մետաքսէ, բայց այդ երկու տօնի օրերում՝ նոքա պիտի թողնեն այդ գոգնոցն, բոլորովին մերկանում են և միմեանց տալիս են քոյր անունն:

ԺԷ. — Հինգերրորդ դարուս մի մատենագիր յայտնում է մեզ՝ որ իւր ժամանակուայ ժողովրդեան կարծիքն համարում էր որ այս չաստուածուհիքն մահկանացու էին, որ նոքա ունեցած էին մի ընկերքն, և թէ իւրեանց կենաց վերջը պիտի լինէր մահուամբ*). բայց երկրի բարեպաշտ կանայքն ունին երկու զանազան կարծիք այդ ցնորական էակների երջանիկ գոյութեան վերայ: Մի քանիսն կարծում են որ այս չաստուածուհոց ժողովի մէջ՝ կայ միշտ բաւականին շատ արուաստուածութիւններ, որ զարդարուած են բնութեան բոլոր ընծաներով, և ապրում են ի միասին չաստուածուհիների հետ. նոքա կարծում են թէ երկաքանչիւրն էլ մահկանացուք են ինչպէս մարդիկ, այլ կանայք ընծայում են մի ծնունդ կամ մի սկիզբն այդ չաստուածուհւոյ, բայց կարծում են որ նրանք երբէք չեն մեռանում, որ նոցա գոյութիւնն անեղծ է, և որ նոքա պահում են մշտնջենաւորապէս իւրեանց երիտասարդութիւնն և առոյգութիւնն, և թէ չեն ընդունում ոչ մի արու էակ իւրեանց մէջ, որ նորանց երանութիւնն լինում է մի մտաւորական և անխռով զգայասիրութեան մէջ: Արական չաստուածներն, որ ապրում էին այս յաւերժահարսների հետ, բազմատեսակ էին, մի քանիսն մարդկային կերպարանք

(*) Եզնիկ Կողբայի էջ 86:

ունէին, բայց էին մեծայաղթ հասակով, և սիրում էին անցկացնել իւրեանց ժամանակն նոցա հետ անտառներում, պարտէզների մէջ, և քաղաքների և գիւղերի կործանուած կայանների վերայ, դոքա կոչուած էին Պայք, և համարվում էին որպէս պաշտպանիչ չաստուածք՝ ընդդէմ վիշապաց և ընդդէմ վայրենի գազանաց։ Նորանց տալիս էին այդ գազանաց նուաճման զօրութիւնն, կարծում էին որ նոքա շատ անգամ ստիպում էին վիշապներին գնալու ծառայել երկրագործներին հունձը տանելու համար ամբարներն, երբեմն նոքա առաջնորդում էին նա և ձկնաորսորդներին դէպի բարի նաւահանգիստն, մտանում էին մինչ անգամ քաղաքները և նրանց ընկերանում էին մինչ իւրեանց տներն։ Երկրորդ տեսակների մարմնի վերին մասն մարդկային կերպարանք ունէր, բայց ստորին մասն ոմանք իշոյ, իսկ այլք ձիոյ կամ այլ կերպարանք։ Յաւերժահարսանց ընկերներն որոնք կազմում էին երրորդ տեսակն, կոչվում էին Եղջերուատք։ Չորրորդ տեսակից մի քանիսն կոչուած էին Պարիկ՝ որ նշանակում է կաքաւող, և այլք Յուշկապարիկ՝ որ ասել է [illegible]։

ԺԲ.—Հայերն ունէին նա և մի մասնաւոր չաստուածութիւն օրհնութեան կամ դոյլից առատութեան, որ կոչում էին Համբարու, այս ինքն պահապան ամբարների և կամ ուտելեաց պաշարների։ Մի այլ պահապան չաստուած՝ որ անուանում էին Շահապետ, այս ինքն գլխաւոր կամ պահապան շահերի կամ բերքերի, որ հոգում էր պտղաբեր անելու դաշտերն և գիւղերն։ Մի երրորդ չաստուածութիւն որ կոչում էին Նհանգ, անդադար զբաղուած էր պահելու գետերի առատութիւնը, արգելելու հեղեղն և փչացնելու ծովային գազաններն։

ԺԳ.—Պատերազմականներն և բոլոր քաջ մարդերն՝ ունէին նա և իւրեանց մասնաւոր չաստուածութիւնն, որին երբեմն կոչում էին Տէկ՝ որ ասել է [illegible], իսկ երբեմն Արալէզ կամ Յարալէզ՝ այս ինքն յար լզող։ կարծում էին որ այս չաստուածքն ամենավտանգաւոր վէրքերն բժշկելու զօրութիւնն ունէին և կեանք էին պարգևում պատերազմի մէջ մեռնողներին։ Հայաստանի պատմութիւնն յիշում է՝ որ իւր թագաւորաց մէկն կոչեցեալ Արայ, սպանուելով մի պատերազմի մէջ՝ որ տուել էր ընդ դէմ Շամիրամի, երկրի բնակիչներն խմբովին յոտի կանգնելով ի վրէժխնդրութիւն իւրեանց իշխանի մահուան, Ասորեստանի հերոսուհին՝ որպէս զի խաղաղացնէ ժողովուրդն, նրանց կարծեցնել տուաւ որ Տիկերն Արայի վէրքերն ծծել էին և նրան յարութիւն էին տուել *)։

(Մնացեալն ի յետագայս)։

Թ. ՕՐ. ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

(*) Մովսէս Խոր. գիրք Ա. գլուխ 14։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

Ֆիզիքական կրթութեան կարեւորութիւնը: — Մտաւորական զարգացման կախումն ունենալը ֆիզիքական զարգացումից: — Առողջութեան կանոնները եւ նրանց պահանջողութիւնները: — Հասարակութիւնը արդեօ՞ք նրանց կանոնները կատարում է: — Ուսումնարանի պարտաւորութիւնն է նուազեցնել ուսանելի առարկաների վատ ազդեցութիւնը: — Մարմնավարժութիւնը եւ արուեստական աշխատութիւնը:

Այժմեան ամեն մանկավարժները և բժիշկները հաստատում են, որ երեխայքը դաստիարակելու ժամանակ ամենակարևոր է հոգալ և նրանց մարմնական առողջութեան համար։ Այդ պահանջողութիւնները լիովին հիմնուած է մտքի և փորձոյ դատողութեան վերայ. բայց կարեկցաբար պէտք է ասել, որ մենք մոռացել ենք բոլորովին կրթելու մեր երեխայոց մարմինները, կարծես թէ նրանք միայն հոգուց են բաղկացած, և իբր թէ մարմնոյ զարգանալը այնպիսի մի չնչին գործ է, որ նրա վրայ չարժէ անգամ ուշադրութիւն դարձնել։ Մենք հօթը կամ վեց տարեկան ժամանակում երեխային նստացնում ենք գրքի առջև, և աշխատելով նրա գլուխը լցնել զանազան իմաստութիւններով, բոլորովին մոռանում ենք կրթել նրա մարմինը։ Այդ վերջինը արդէն բոլորովին վերջացած համարելով, մենք հոգում ենք միայն աշակերտների մտաւորական և բարոյական զարգացմանը վերայ։

Յիշենք, որ այդ պատճառով ասում է Գերմանացւոց երևելի մանկավարժ Ֆ. Դիտտէսը, որը եղել էր Գոթայ քաղաքի ուսուցչական դպրոցում կառավարիչ (Դիրեկտօր); — «Մարդկային մարմնոյ վերաբերութեամբ դաստիարակական կանոնները շատ ժամանակ ոչ թէ միայն լիակատար հասկացողութիւն չէ տալիս, այլ արժանաւոր ուշադրութիւն անգամ չէ դարձնում նրա վերայ։ Մարմնոյ կանոնաւոր զարգացումը երկրորդական գործ է համարվում և դաստիարակները մեծ մասով այն են մտածում, որ ինչքան կարելի է աշակերտի գլուխը շուտ լցնեն զանազան տեղեկութիւններով և պատրաստեն նրան կեանքի մի որոշեալ դրութեան համար։ Իսկ եթէ լաւ մտածենք, հեշտ կարող ենք հասկանալ, որ առողջութիւնը, զօրութիւնը և մարմնոյ թեթևութիւնը կրթութեան համար ևս նոյնչափ անհրաժեշտ կարևորութիւն ունին, որչափ հոգւոյ առողջութիւնը և զարգացումը։

Այդ բոլորովին ճշմարիտ է։ Մարմնոյ կրթութիւնը շատ հարկաւոր է, — այդ ճշմարտութիւնը նախնի մարդիկը, ինչպէս Յոյները, մեզանից աւելի լաւ էին հասկացել և նրանք մեծ հոգս էին անում, որ իրանց երեխայքը ուսման կրթութիւն ստանալու հետ միասին, զարգացնէին և իրանց մարմնական զօրութիւնները։ Սա դեռ քիչ էր, որ ուսանելի առարկաները սովորացնում էին մարմնավարժական կրթութեան հետ, և դասախօսութիւնները լինում էին ոչ թէ տան մէջ, այլ այգում և բաց օդում։

Նախնիքը կարծում էին թէ միայն առողջ մարմնումն է առողջ հոգին, և այդ կարծիքը ամենաճշմարիտ հաստատութիւն ունի։ Մենք շատ ենք խօսում բարոյա-

կանութեան և կեանքի մէջ հաստատ համոզմունքը ունենալու համար, բայց մենք մոռանում ենք, որ բարոյական տկարութիւնը կախումն ունի մարմնոյ առողջ և կանոնաւոր զարգացումից: Փիզիքապէս առողջ և զօրեղ մարդը երկար ժամանակ կռւում է, իսկ կեանքի թշուառութիւնների ծանրութեան տակ շատ քիչ է ճնշւում և կարող է աւելի հաստատ կերպով յառաջ տանել իւր համոզմունքները կեանքի մէջ և իւր բարոյական գաղափարները հեռացնել ուրիշի մտքերից: Փիզիքական նեղութիւնները խանգարում են զգայական ընդունակութիւնը, թուլացնում են կամքը. ընդ հակառակն զուարթութիւնը և մարմնոյ պնդութիւնը զօրացնում են բոլոր մտաւորական ձըգտումները, օգնում են մտածողութեանը և նրա պարզապէս արտայայտութեանը և ընդունակ են անում ուրախութեան և բոլոր բարիներ գործելուն. վերջապէս գոյանում է մարդու մէջ ինքնահաւատարմութիւն, քաջութիւն և հոգեկան զօրութիւն. առանց սորանց ոչինչ չէ կարող անել և ամենաբարի ցանկութիւնը:

Շատ ժամանակ սրա համար հակառակութիւններ են լսւում և կեանքից փաստեր բերւում: Ցոյց են տալիս զանազան մեծ և ամենազարգացած մարդիկներ, որոնք չեն ունեցել պնդակազմ առողջութիւն: Բայց սրա համար կարելի է հարցնել ա), թէ արդեօ՞ք այդ ամենը ևս ճշմարիտ են՝ այնպէս՝ ինչպէս առաջարկում են. որովհետև շատ զարգացած մարդիկը, գիտութեան և գրականութեան երևելի գործունեաները ի բնէ թոյլ առողջութիւն չեն ունեցել, այլ յետոյ շափահաս ժամանակը՝ ուսումնական անընդհատ և ծանր պարապմունքից խանգարել են իրանց Փիզիքական առողջութիւնը. բ), եթէ իրանց թոյլ առողջութեամբը այդ մարդիկը շատ օգուտներ են տուել մարդկութեանը, հապա եթէ ունենային նրանք Փիզիքական պնդակազմութիւն, նրանք էլ աւելի մեծ օգուտներ կտային: Ո՞վ է իմանում, կարելի է նրանք ցանկացել են մի որ և իցէ բան ևս գործել, բայց չեն կարողացել, միայն այն պատճառով՝ որ վատառողջութիւնը թոյլ չէ տուել նրանց այդ բանը անել: Վերջապէս այն պատերազմը, որից Փիզիքապէս պնդակազմ մարդը անյաղթելի է մնում, փշրում է և սպանում թոյլ կազմուածք ունեցող մարդուն: Մեր առջևն է մարդկանց ցուցակը, այն մարդկանց՝ որոնք մըտել են գերեզմանի մէջ. և որտեղից կարելի է որոնել նրանց մահուան պատճառները:

Թոյլ կազմուածքը, վատառողջ մարմինները, որոնց կրթութեան համար այսպէս քիչ ուշադրութիւն են դարձրել, չեն կարողացել տանել կեանքի ծանրութեանը, անդադար պատերազմներին և գործունէութիւններին: Նրանց հոգին քաջ է եղել, իսկ մարմինը շատ տկար. միայն այն մարդը չէ ընկնում պատերազմում, չէ ընկճւում հէնց առաջին քայլերում այդ տեսակ կեանքի հարուածքներից և ընդունակ է լինում տանելու կեանքի ծանր աշխատանքներին՝ նա՝ որ և ոչ միայն հոգւով է քաջ, այլ և մարմնով առողջ:

Առողջութեան կանոնը պահանջում է, որ մենք ունենանք կանոնաւոր սնունդ;

հագուստ, որ յարմար է կլիմայական պայմաններին. ունենանք ամենակարևոր մաքրութիւն, շնչենք մաքուր օդ, և վերջապէս ունենանք զանազան կերպի գործունէութիւն, այս ինքն զարգացնենք և կազդուրենք ոչ թէ մենակ մտաւորական ընդունակութիւնները, այլ և ֆիզիքական զօրութիւնները։

Ո՛չ ոք չի հակառակիլ, թէ այդ ամեն պահանջմունքները հասարակութիւնը չէ կատարում։ Սննդի նպատակը ի՞նչ է։— Սննդի նպատակը այն է, որ մարմնուն հասցնենք պատշաճ քանակութեամբ այն ամեն նիւթերը, որոնցից ի բնէ մարմինը բաղկացած է, և որոնք այդ պատճառաւ ամենակարևոր են նրա կանոնաւոր զարգացմանը։ Բայց արդեօ՞ք ունին մեր մայրերը մի որ և իցէ հասկացողութիւն այդ մասին սննդի համար։ Ոչ։ Սովորացնելով կանանց Գաղղիերէն խօսելը և չքնաղ պարելը՝ զանազան պօլքաներ և մազուրկաներ, մենք նրանց գործնական գիտութիւն չենք տալիս, որոնք իւրաքանչիւր ծնողի և տնտեսի իրա կեանքում հարկաւոր են։

Յնդադար լսում են ձայներ թէ — ‹‹ Մեզ սպիտակաձեռն կանայք հարկաւոր չեն և յիմար կոքաւլիչներ, այլ աշխատասէր կանայք. մեզ հարկաւոր են ո՛չ թէ կանանց պրօֆեսորներ և գրաշարներ, գրագիրներ և քաղաքական գործունեաներ, այլ հարկաւոր են այնպիսի խելօք և լաւ մայրեր — ծնողներ, որոնք իմանային տնտեսութեան գործը ,, ։ Այդ ամենը գեղեցիկ են և անհման։— Բայց ի՞նչպիսի կերպով կարող ենք ունենալ լաւ ծնողներ, լաւ տնտեսներ և լաւ կանայք։ Մի՞թէ Գաղղիերէն լեզու և չպարել սովորացնելով կարող ենք ունենալ նրանց։ Ինչու՞ խանգարենք աղջկանը պարել սովորացնելով, մինչդեռ նրան հարկաւոր է սովորացնել աւելի օգտաւէտ առարկաներ և կեանքին աւելի յարմար գիտութիւններ։ Եթէ նա՛ ունի բանաստեղծական տաղանդ կամ մատենագրական շնորհք, նա և առանց իմանալու, թէ նրանք ունին հարցման ձևեր և փոխաբերութիւններ, կարող է մնալ գրականական ասպարէզ։ Օտարոտի չէ՞ լինիլ արդեօք աղջկայ ժամերը անցուցանել տալ դաշնամուրի վերայ ածելով, գործնական գիտութիւն չի՛ տալ, առանց որոյ նա չի կարող իրա կեանքում մի քայլ անգամ փոխել. կամ թէ վախենում ենք աղջկան բացայայտել ճշմարտութիւնը իւր ներկայ դրութեան մէջ, և անվայելուչ ենք համարում ուսուցանել նրան այնպիսի գիտութիւն, որը՛ քննում է մարդոյ մարմինը և նրանում երևացած երևոյթները։ Ո՜հ, եթէ այդպէս էր, ուրեմն լաւ է ուղղակի ասենք, որ մեզ հարկաւոր չեն ո՛չ լաւ և խելօք ծնողներ, ոչ գիտուն տնտեսներ, և ո՛չ էլ առողջամիտ կանայք, այլ մանկավարժութեան և մարդակազմութեան անտեղեակ ծնողներ, անկիրթ տնտեսներ, մտածելու անկարող կանայք, միամիտ արարածներ, որոնք ‹‹ ծուղըն ,, բառը արտասանելիս կամ լսելիս ամաչում են. պարզ ասել թէ մեզ հարկաւոր են ո՛չ թէ զգայուն կանայք, որոնք կարող լինէին խրախուսել իրանց ամուսնոյն և բարոյապէս կազդուրել իրանց սիրովը և բարեկամութեամբը, այլ պճնասէր էակներ, որոնք ի զուր տեղը վատնում են իրանց ամուսնոյ աշխատած փողերը,

որոնք կեանքի բոլոր զուարճութիւնը գըտնում են պարի և զարդարանքի մէջ, և որոնք չեն քաշվերում ամուսնոյն իրանց սիրովը, այլ թուլացնում են նրան և հասցնում մինչև մահուան դուռը։

Բայց մենք չենք կամենում սրան համաձայնվիլ և շարունակում ենք հաստատել մեր խօսքը, թէ մեզ հարկաւոր են լաւ ծնողներ և խելօք տնտեսներ։ Եթէ այս այսպէս է, ուրեմն կնամարդին գործնական գիտութիւն տանք, այնպէս որ մայրը կամենալով կարողանայ իրա երեխաները դարձնել առողջ էակներ։

Այժմ խօսենք առողջութեան կանոնի երկրորդ պահանջմանը վերայ։—Թէ արդեօ՞ք կլիմայի պայմանադրութեան համեմատ մենք հագնվում ենք։—Ոչ։—Որովհետև մենք կամենում ենք հետևել ոչ թէ նրան՝ ինչ որ գործնական գիտութիւնն է ցոյց տալիս, այլ նրան՝ ինչ որ ժամանակեայ նորաձևութիւնն է պահանջում։ Նայեցէք մի արական սեռի հագուստի վերայ։ Մի՞թէ ֆրակը, որ այնպէս յաջողակ ծաղրալի է սունկակեր մարդկանց — յարմար և պատշաճաւոր հագուստ է։ Մի՞թէ կրծակալները (жилетъ), որոնք կիսով չափ միայն կուրծքը ծածկում են,—առողջութեան կանոնների պահանջմունքներին համապատասխանում են։ Մի՞թէ նեղ կօշիկները, որոնք սեղմում են ոտը—չե՞ն արգելում նրա կանոնաւոր զարգացմանը, ուղիղ և հաստատուն ընթացքին։ Մի՞թէ միշտ շարֆով պարանոցը փաթաթելը՝ լա՞ւ է, և աւելի վնաս չէ՞ քան թէ օգտակար։ Այժմ իգական սեռի հագուստը։—Այս տեղ էլ աւելի պէտք է կատարել գիտութեան պահանջմունքները։ Բայց կանայք հագնում են այնպիսի հագուստներ, որոնք ինչպէս յայտնի է ամեն բժիշկներին, շատերին պատճառում են գլխաւոր հիւանդութիւններ։ Օրինակի համար հագնում են կրինօլիններ, որոնք չափազանց վնասում են առողջութեանը. ձմեռը ման են գալի թեթև հագուստով, միայն նրա համար՝ որ նորաձևութիւն է։ Իսկ երեխայոց հագուստը։ Բայց ամենևին մենք չէինք կարող վերջացնել մեր խօսքը՝ եթէ կամենայինք թուել այն ամենը, որոնք գիտութեան պահանջմունքների հակառակն են գործվում՝ միայն նորաձևութեանը յարմարվելով։

Իսկ եթէ մենք չկատարենք գիտութեան առաջի երկու պահանջմունքները,—հապա իսկութեամբ կկատարենք երրորդը,—կհոգանք արդեօ՞ք մաքրակեցութեան համար։ Բոլորովին ընդհակառակն։ Այդ պահանջմունքը նմանապէս քիչ է քննվում, ինչպէս և առողջութեան կանոնների միւս պահանջմունքները։—Եթէ մենք հասարակութեան մէջ անմաքուր ձեռքերով և ապականված երեսով չենք մտնում՝—սա ամենևին նրա համար չէ, որ մենք յարգում ենք առողջապահական կանոնների պահանջմունքները, այլ միայն նրա համար՝ որ այդ տեսակ կեղտոտութեան մէջ երևալը մենք անվայելուչ ենք համարում։

Ինչպէս թատրոնի մէջ դեկորացիաների ետքում, որ տեղ մեզ կողմնակի մարդիկը չեն նկատում,— մենք բոլորովին ուշ չենք դարձնում մաքրութեանը վերայ։ Նայեցէք ամեն տեղ առանձնասենեակներում, ուր կտեսնէք անմաքրութիւն, ապական-

ված օդ և հոտ, որոնք անտանելի են շատերին, թէ և քիչ զգալի լինէին դոքա։

Իսկ մանկանոցնե՞րը և ննջարաննե՞րը։— Այս տեղ ևս լինում է շատ անմաքրութիւն և շատ անգամ երեխայոց ապականված կտաւեղէններ, որոնք օդն աւելի ծանրացնում են շնչառութեան համար։ Որտեղ չկան առանձին մանկանոցներ և ննջարաններ, այն տեղ էլ աւելի վատ է լինում օդը։ Պէտք է ամբողջ օրը աշխատել այդ խանգարված մթնոլորդում (ատմօսֆերայ)։

Մեր ներս ընդունած օդի մաքրութեան մասին մենք արդեօք հոգում ենք, որը մեզանից մեծ աշխատանք չէ պահանջում։ Ո՛չ։ Պարապելով միայն մտաւորական աշխատութիւնով, մենք ժամանակի մեծ մասը ստիպուած ենք լինում նստել սենեակում, բայց այժմ մենք տեսանք թէ ինչպիսի մթնոլորդ կայ մեր բնակարաններում։ Այդ պատճառաւ շատ զարմանալի չէ, որ մենք ենթարկվում ենք շատ ժամանակ հիւանդութիւններին, արեան սակաւութեան և սրտի բաբախման։

Մնում է առողջութեան կանոնի հինգերորդ պահանջմունքը։ Կատարում ենք արդեօք այդ ուսումնական պահանջը։ Պարզեալ և պարզեալ ո՛չ։ Հոգալով միայն մտաւոր կրթութեան համար, չենք մտածում մարմնոյ զարգացման մասին, չը հասկանալով, որ մտաւոր զարգացումը կախումն ունի մարմնական զարգացումից.—ուրիշ խօսքով, մտաւորական զօրութեանց կանոնաւոր զարգացումը պայմանաւորվում է ֆիզիքական զօրութեանց կանոնաւոր զարգացումից։ Ահա դաստիարակել—կնշանակէ զարգացնել բոլոր զօրութիւնները, որքան կարելի է մինչև կատարելութեան վերին աստիճանը։ Իսկ եթէ մենք աշխատում ենք զարգացնել երիտասարդի մտաւորական զօրութիւնը, ուրեմն չպէտք է զանց առնել և նրա ֆիզիքական զարգացումը։

Ահա էլի մէկ նշանաւոր պատճառ, որը ստիպում է մեզ ուշադրութիւն դարձնել մարմնոյ կրթութեան վերայ։—Լաւ հետևանքին հասնելու համար, պէտք է զարգացնել աշակերտին ֆիզիքապէս, պէտք է հերթակալել գիտութեան դասերը մարմնավարժութեան հետ։ Շատերը նկատում են, որ եթէ ի բնէ կազմուածքը թոյլ է, նա չի կարող մարմնավարժութիւնով կազդուրվել։ Սա ճշմարիտ չէ։ Կեանքի փաստերը հերքում են այդ միտքը։ ‘Նոյնպէս Սոկրատէսը՝ հին իմաստունը ասում էր, ''բնութիւնից թոյլ մարդիկը միշտ մարմնավարժութիւնով պարապվելով, կարող են աւելի շուտ կազդուրվել քան թէ աւելի ուժեղ մարդիկը, որոնք ուշադրութիւն չեն դարձրել մարմնավարժութեան վերայ,,։

Անկասկած, մարմնոյ կրթութիւնը միայն մէկ մարմնավարժութեան մէջ չէ, բայց ուսումնարանի համար կարելի է ընտրել միայն այդ վերջինը, և ահա ինչու համար ենք մենք այդպէս սաստիկ հաստատում մեր այն կարծեաց վերայ, որ մեր ուսումնարանների աշակերտները կազդուրէին իրանց զօրութիւնը։ Որպէս զի պարապմունքը քիչ վնասակար ազդեցութիւն ունենայ աշակերտների առողջութեանը վերայ, հարկաւոր է մի փոքր ժամանակ գործադրել մկանունքների զօրութիւնը զարգացնելու համար։

Ի՞նչպէս կարող ենք մենք շուտով հասնել սորան։ Եզրափակում ենք թէ— մարմնավարժութեամբ։ Եւ ահա այդ նպատակով նրան մտցնում են մի քանի գիւղացւոց ուսումնարաններում *)։ Բայց մենք կարծում ենք, որ աւելի լաւ միջոց կայ։ — Մի քանի խօսքերով մենք կաշխատենք ցոյց տալ արուեստական աշխատութեան օգուտը, և սորանից կեզրակացնենք, որ մարմնավարժութիւնը այդ դէպքում այնպէս յարմար չէ և օգտաւէտ, ինչպէս արուեստական աշխատութիւնը։

Արուեստական աշխատութեան ժամանակ մասնակից է լինում մկանունքների աշխատութիւնը. մկանունքների աշխատութեան այդ մասնակցութիւնը արուեստական աշխատութեան մէջ, տալիս է այդ վերջինին մանկավարժականնշանակութիւն, որը վերաբերում է և մանկավարժութեանը։ Մկանունքների աշխատանքը պնդացնում են կամքի զօրութիւնը։ Պէտք է երեխային սովորացնել անպատճառ հասնել առաջադրած նպատակին աշխատութեան մէջ, թէ կուզէ իրա վեր առած աշխատութիւնը մեծ լինի և շարունակվող։ Պարապմունքը, որ կազդուրում է կամքի զօրութիւնը ամենահեշտից աստիճանաբար դէպի դժուար պարապմունքը, տալիս է երեխայոց համառ համբերութիւն, և նրա հետ միասին ցոյց կտան նրան, որ չկայ այնպիսի մի գործ, որը անկարելի լինէր կատարել՝ եթէ ինքը երեխան կամենար։

Աշխատութիւնը առանց նպատակի, ինչքան որ նա մեծ լինէր, չունի ոչ մի նշանակութիւն։ Դուք կարող էք՝ ինչքան հարկաւոր է, թէ կուզի մինչև ձեր ուժի հատվելը՝ ծռել կոճղը մէկ ծայրից դէպի միւս ծայրը, բայց սորանից հաւատացէք որ ձեզանում կաւելանայ կամքի զօրութիւնը և կստացվի մի առանձին հետեւանք։

Այո, միայն մտաւոր աշխատութիւնը, որը ունի բանաւոր նպատակ, ինչպէս զոր օրինակ՝ արուեստական աշխատութիւնը, ընդունակ է զարգացնել մարդու մէջ բնութեան զօրութիւնը։ Բայց ընդ այսմ ամենայնի, փոխանակ բնութիւնը զարգացնելու, արուեստական աշխատութիւնը մարդու մէջ զարգացնում է և Ֆիզիքական և մկանունքների զօրութիւնը։ Շատերը նկատում են, որ մկանունքների զօրութիւնը մարմնավարժութիւնով է զարգանում։ Թող այդպէս լինի, մենք չենք կամենում երկար հակաճառել սորա ընդդէմ. բայց յիշենք, որ մարմնավարժութիւնը մեծ մասով զարգացնում է մարդուս արագութիւնը։ Արուեստական աշխատութիւնը աւելի պնդացնում է մկանունքների զօրութիւնը քան մարմնավարժականը. զոր օրինակ, ասենք թէ մենք հիւս ենք և կամենում ենք մէկ արկղ շինել, սորա համար մենք 1) գործ ենք ածում մեր մկանունքների զօրութիւնը, որոնք կազդուրում են մեր Ֆիզիքական զօրութիւնները, 2) մեր առաջի աշխատանքի մօտակայ նպատակը՝ մեր շինած առարկան է, որը մենք կարող ենք գործ

(*) Բայց քաղաքի ուսումնարաններում — նըրանից բացառելին չկայ. իսկ Գիմնազիաներում, նա ևս մի քանիսներում, անբաւականութեամբ ցեղ կերպով են շինած։

ածել օգուտով մեզ և ուրիշների համար։ Իսկ այս օգուտը մեզ համար ախորժելի է լինում։ Այս բոլորովին մարմնամարժութիւն չէ։ Մարմնամարժութիւնը, որն որ միմիայն մկանունքների զարգացման համար է, կարող է շուտով ձանձրացնել. և մարմնամարժական (Ֆիզիքական) դասերը կարող են շատ շուտ ձանձրացնել աշակերտներին իրանց պարտքը կատարելուց, և աշակերտները մարմնամարժական դասերի ժամանակ կարող են այնպէս ձանձրանալ՝ ինչպէս այժմ են ձանձրանում նրանք Լատինացւոց լեզուի դաս առնելու ժամանակ. իսկ արուեստական աշխատութիւնը, որը ունի բանաւոր նպատակ, շօշափողական հետեւանքներ, ամենայն օր և ամենայն քայլ յառաջ կգնայ արուեստի մէջ, աշակերտների համար ամէնը ախորժելի կլինի, որը կհետաքրքրվի այդ գործում աւելի և աւելի։

Ապացուցանենք արուեստական աշխատութեան կարեւորութիւնը մարմնամարժութեան հետ։ Արուեստական աշխատութիւնը մարդուս ազատ է անում, որը քիչ կախումն ունի ամենայն սեսակ դէպքերից։ Կեանքում մարդուն ամեն բան կարող է պատահել մինչև աւելի վատը քան թէ լաւը։ Տեսէ՛ք ինչքան է ոչնչանում երիտասարդների զօրութիւնը միակերպ պարզագրելով թղթերի երեսները։ Սակայն արուեստական աշխատութեան նշանակութիւնը, որը գանվում է ուսումնարանում, և յետոյ կեանքում զարգանալը՝ մարդուն հաստատում է աւելի յաջողակ պայմաններում։

Վերջապէս, դուք ստացէք լաւ կըրթութիւն, բայց ո՞վ կարող է հաստատապէս ասել, որ դուք ձեր կեանքի ճանապարհով լաւ էք ընթանում և չէք ընկնում անակնկալ հարուածից զանազան անյաջող հանգամանքների մէջ։ Ոչ ոք։ Այդ հարուածները և անյաջող հանգամանքները անթիւ են։ Բայց դուք ի՞նչ պէտք է անէք ձեր ուսումնական կրթութեան հետ, եթէ դուք կընկնէք այնպիսի դրութեան մէջ, որտեղ չէ կարելի յարմարցնել ուսումնական կրթութիւնը։ Բայց ինչի՞ համար է ձեր մարմնամարժութիւնը։ Ի հարկէ, ոչ մի բանի համար։

Որպէս զի մտաւորական պարապմունքը աշակերտների առողջութիւնը չվնասէ, պէտք է ուշք դարձնել և մարմնոյ կըրթութեան համար, և պէտք է մտցնել Ֆիզիքական պարապմանց դասեր։ Բայց մեր կարծիքովը չէ թէ մարմնամարժութիւնը պէտք է մտցնել այդ նպատակի համար, այլ ուսումնարանի մօտ պէտք է շինվի արուեստական վարպետարան (արհեստանոց)։

Արուեստական աշխատութիւնը՝ այնպէս՝ ինչպէս մարմնամարժութիւնը կը զարգացնէր աշակերտների Ֆիզիքական զօրութիւնը, և բացի սորանից նա կտար և գործնական գիտութիւն, կամ այսպէս ասել, այդ գիտութեան սկիզբն ժամանակով մարդու համար ստոյգ բարութիւն կլինի։ Ընդհանուր կրթութիւն ստանալով, մարդը կարող է որոշել արուեստական աշխատութիւնը իրա մասնաւոր լինելուցը, իսկ բացի դրանից արուեստի գիտութիւնը կարող է օգտաւէտ լինել և աշխատաւորին, եթէ կենսական պարապմունքը առ ժամանակ զրկում է նրան կա-

բողութիւնից պարապվելու մտաւորական աշխատութիւնով։

Իսկ եթէ իրա կեանքում մարդը չի կարողանում աւելացնել իրա արուեստական գիտութիւնը, այն ժամանակ և այստեղ արուեստներով պարապվիլը անօգուտ կը լինէր։ Արուեստական աշխատութիւնը զարգացնում է ֆիզիքական, բարոյական և հոգեկան զօրութիւնը, եթէ իրա համոզմունքը և ընդունակութիւնը կտանէ մինչև իրա կեանքի վերջը, եթէ հաստատ կլինի կեանքի ալէկոծութեան մէջ և չընկնիր նրա անյաջողութիւնների ծանրութեան տակ։ Այդ գործը աննշան չէ։ Մինչդեռ մենք չենք հոգում երեխայոց մարմնական զօրութեան զարգացման և նորա հոգեկան զօրութեան վերայ, ապա ի զուր պէտք է ցանկանք տեսնել մեր երեխայոց բարոյականութիւնը։ Նուազ և թոյլ մարդը չի կարող աւելի բարոյական լինիլ։ Թող նա ունենայ մաքուր և լաւ համոզմունք, բայց նա զօրութիւն չի ունենալ՝ որ այդ համոզմունքները տանէ կեանքի մէջ։ Նրա խօսքերը չի համեմատվիլ գործերի հետ։ Մարդս պէտք է բարոյական և հոգեկան զօրութիւն ունենայ, բայց այս հոգեկան զօրութիւնը նա չի ունենալ՝ եթէ ուսումնարանը, զարգացնելով նրան մտաւորապէս, չէ զարգացրել ֆիզիքապէս։ Բաւական չէ միայն որ մարդուն տանք լաւ մաքեր, պէտք է տանք նրան և զօրութիւն, որ կատարէ լաւ մտադրութիւնները։ Եթէ մենք չհոգանք սրա մասին և ուշադրութիւն չդարձնենք երեխայոց ֆիզիքական զարգացման վերայ, այն ժամանակ մեր երեխայքը լաւ աշխատաւորներ չեն դառնալ, այլ խղճալի ֆըքաղերներ*)։

Թ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԳԱԼՍՏԵԱՆՑ.

Ի Ք. Բաքու։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՊՍԱԿՆԵՐ

Որպէս չի կարելի լինի յարատև հեզութեամբ տանել կենաց ասպարիզի մէջ պատահելի զանազան զրկանաց, որպէս չի կարելի լինի՝ անտարբերաբար նայել անձնական պատուոց և շահուց վերայ — սոքա գլխաւոր զսպանակներ են սովորական գործոց ընթացից, և որպէս չի կարելի լինի յաղթահարել մտաւոր տիոց զմայլեցուցիչ պատիր երևակայութիւնները, — անհրաժեշտ է փափկութիւն, այն գերազանցնողն, զոր կզգայ զաւակ մի առ մայր իւր, անհրաժեշտ է առաւել մեծ ինչ՝ քան զպարտաւորութիւն և զսէր, անհրաժեշտ է առաքինութիւն։

ԼԵՊՌԵՆ

Անդամ Ֆռանսիական Ակադեմիայի

Ա.

Բոլոր պատանեկութեան արբուն հասակի մէջ՝ չկայ այնքան վրդովեալ ժա-

---

(*) Գիւղացւոց ուսումնարաններում դասատների արուեստական նախագիտելիքը գիւղացւոց աղքատութեան առաջը առնելուն նոր գործիք է տալիս, և նմանապէս կարող է օգնել նրան և ուրիշ ժամանակ։ Արուեստների նախագիտելիքը կարող է ազդեցութիւն ունենալ և մարդկանց տնտեսական կեանքի վրայ։

մանակ մի՝ որքան կվրդովի նա երբ ուսումնարաններու մէջ յառաջադիմութեան համար վարժատրութեանց բաշխումը կլինի։ Դեռ ես այն օրից շատ յառաջ — տղայք միայն անով կպարապին, անոր վրայ միայն կմտածեն և անոր վրայ մի միայն կզրուցեն։ Անհամբերութեամբ կհամրեն ժամերը և րոպէները, որոնք յական թարթափելոյ անգամ կզատէ զիրենք, այդպէս վառվռուն եռանդեամբ կսպասեն այն ամենուն ակնկալեալ վայրկենին։

Աշակերտներից ոմանց համար մեծ տօնախմբութիւն է վարժատրութեանց բաշխման ժամանակը, որ կլինի ուսումնական տարւոյն վերջերը, և արձակուրդին սկիզբները, — արձակուրդին, յորում նոքա օգուտ կքաղեն կատարեալ ազատութեամբ, և ուսումնական պարապմանց միջոցին անգամ, նոցա մտածմունքը դէպի անոր կուղղեն, այս ամենուն համար հաւատարապէս թեթև և հաճելի չէ, ոմանց համար ալ տաղտկալի է։

Իսկ ոմանց համար, ընդհակառակն, այս գաղափարի հետ կմիաւորի մի այլ տեսակ ակնկալութիւն։ Օ՜ր վարձատրութեան բաշխման — օ՜ր փառաց, օ՜ր յաղթանակի։ — Յոյս առ ի գերազանցութիւն, երկիւղ կործանման, ապաշաւութիւն կորուսեալ ժամանակաց վերայ։ Ահա, ինչ կգրաւէ և տարակուսանաց մէջ կընկղմէ պատանեկութեան մատաղ սիրտը։

Վերջապէս հանդիսի օրը կհասնի։ — Ո՛հ ինչպէ՜ս ծանր կանցնեն ժամերը։ Բայց նշանը տրուած է և զանգակահարութեան արձագանքը լսուեցաւ օդին մէջ։ Աշակերտները իրենց ուսուցչաց հսկողութեան տակ կարգաւ կերթան մեծ սրահը — ուր բարձր դրուք կառուցեալ է մեծ և ընդարձակ վրան մի զանազան գեղեցիկ զարդարանքներով զարդարուած։ — Իշխանութիւնը բաղկացնողները, Պրոֆեսորները՝ և քաղաքին պատուաւոր ընտանիքները կկազմեն երևելի ալխպաքու։ Վրանին բոլորտիքը շարուած է երկ-երկու կարգ նստարաններ, որոց վրայ կնստին աշակերտները։ Մէջտեղը կտեղաւորուին նոցա ծնողքը, ազգականները, և բարեկամները, և անհանգիստ սրտով կըսպասեն վրդովեցուցիչ հանդիսին սկսելուն։

Վարժարանին հանդէսը կսկսի և գերազանց գտնուող անունը կհնչուի փողով և ծափահարութեան որոտմամբ։ Նա կելնէ կընդունի բոլոր տարուան անդուլ և անձանձիր աշխատանաց և ջանից արդիւնքը։

Ի միջի անկեղծ գովեստից և ընդհանուր հրճուանաց լսելի կլինի և լալացեալ կոծ մի։ Այդ լացողը մայր մի է . . . նա կըհպարտանայ իւր որդւով . . . նա երջանիկ է . . . սաստիկ կբաբախի նորա սիրտը . . . սակայն նա կուլայ . . ։ Ո՛հ, այս ուրախութեան անոյշ արտասուքներ են . . . արտասո՜ւք երջանկութեան . . ։ Օրհնեա՜լ լինին այն զաւակունք, որ այդօրինակ կհարկադրեն լալ իրենց ծնողքը։

Եւ այսպէս այս օրուան մէջ կատարուեցաւ վարձատրութեան բաշխումն Օռլեաք քաղաքի ծխական ուսումնարանի մէջ, և այն ժողովքին մէջ մի միայն մէկ անուն յաճախ կկրկնուէր, և ստէպ ստէպ զնա միայն կդիմաւորէին համակամ՝ ցընծութեամբ։ Այս անունը, — Ժան Վ.եժեօյին անունն էր, որ իւր դասարանին

մէջ վարձատրութեան առաջին մրցանակները կստանար։ Երբ դեռ ահա պատանին կերթայ հինգերորդ պսակն ալ ըստանալու, Եպարքոսը կբռնէ նորա ձեռքէն և ժողովրդեան մէջէն անցնելով, կըմօտենայ աղքատ կնոջ մի, որ ձեռքերով երեսը ծածկած, կուլար ջերմ արտասունքով։

— Այս ձեզի է, տիկին, — ասաց Եպարքոսը շարժուն ձայնով, — մասնակից եղէք ձեր որդւոյն յաղթանակին և ինքնին զարդարեցէք նորա ճակատը այս պսակով։

Տիկին Վեժեօյ կուզէ ելնել, բայց որդւոյն վրդովմունքէն ուժաթափեալ, նորէն կիյնայ աթոռին վրայ, կգրկէ իւր որդին, կսեղմէ զնա իւր կուրծքին վերայ։

— Աստուած օրհնէ զքեզ, որդեակ իմ, ասաց նա ողբալով, — դու կպարտաւորցընես զիս մոռանալ իմ բազմամեայ կրած նեղութիւնները։

Ամենուն դէմքը դարձած է դէպի պատանի Վեժեօյին մօրը, և բոլոր հանդիսականք իրեանց եռանդուն համակրութիւնը կյայտնեն նմա ուրախակից լինելոյ։

Եւ նորանէ զատ ոչ ոք արժանի չէրդաւ այդպիսի ընդհանուր հաղորդակցութեան։ Կանուխ ամուսնանալով ազնիւ վաճառականի մի հետ, տիկին Վեժեօն, իւր ամուսնութեան առաջին տարիները անցուց մեծ բաւականութեամբ։ Հեզ և բարեգործ, անձնանուէր առ բարին, նա անխընայաբար նուիրեց իւր հոգացողութիւնը և օգնութիւնը աղքատներուն և անբաղդներուն։

(Մնացեալն է յետագայս)։

Թարգ. ԼՈՒՍԻԱ Մ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.

ԲԱՆՔ ԱՌ ԱՐԾՆ ՔԱՂԱՔ.

Ո՜վ դու քաղաք՝ գերահռչակ՝ ընդ համօրէն՝ Հայաստան,
Բայց այժմ ողբաս ի տրտմութեան ի լաց և յողբ տխրութեան.
Ո՞ւր են նախնի՝ շքեղութիւնքդ՝ յոր զմայլէաք հայելով,
Զոր այժմ ողբամք՝ տեսանելով՝ յոգւոց հանեմք սգալով։
Ո՞ւր գեղեցիկ՝ քո ապարանք՝ եկեղեցիքդ՝ զարդարուն.
Զոր տեսանեմք անհետ եղեալ՝ զարդուք իւրեանց սուրբ համբուն.
Ո՞ւր նախարարք՝ հանդերձ զօրօքն՝ զօրապետօք Հայկազանց,
Որք նստէին ի պալատանդ՝ իբր պատուար ամրոցաց։
Ո՞ւր քո Տիկնայք՝ որոց զքօնլով՝ ի դաշտորայս խնդային,
Ոսկերք նոցա՝ ի հող դեռնի՝ ընդ փլատակօք արդ հեծին.
Ո՞ւր քո ամրոց՝ ուր ամրացեալ՝ արիութեամբ նախահարց,
Մարտնչէին՝ վասն հայրենեաց՝ ընդ անօրէն թշնամեաց։
Ողբամք զքեզ՝ և քոյդ թէպէտ չեմք մեք տեղեակ՝ պերճութեանց,
Այլ աւերակքդ մեզ ցուցանեն՝ զոլ քեզ զլուխ քաղաքաց.
Այլ աղաչեմք՝ պատմել զվէպ՝ քո սոսկալի տանջանաց,
Զոր ընկալար ի թշնամեաց՝ տեսիլ ողորմ՝ մեր աչաց։

— Ո՛վ պատանեակդ՝ չէ պատմելի՝ վէպ չարաչար իմ վշտաց,
Զորս կրեցի ի գիշատիչ՝ յարիւնախանձ ոսոխաց,
Արշաւելով՝ մարդախողխող՝ և բռնաւոր՝ Թշնամեաց,
Կոտորեցին զիմ բնակիչս, զօրէն անգութ գազանաց։
Աւերելով զհոյակապ բերդս և զպալատս քաղաքի,
Եւ այրելով զբնակարանս՝ Թողին նոքա ամայի.
Ցայն սակս ի սուգ՝ նստեալ Հեծեմ՝ բազմադարեան աւերման,
Իբր զծնօղս՝ որոց տեսեալ՝ զդամբան որդւոց՝ լան ողբան։
Այլ անցին ամք, անցին և դարք՝ չգտաւ սիրտ ոք կարեկից,
Ցայց ելանել՝ առ իս ի հարց Թշուառականս աղետից,
Ո՛րդիք Հայկայ՝ զտունս յոսոխաց՝ կործան աւեր տեսանեն,
Ցանհոգս նստեալ՝ ընդ օտարաց չքնաղ պալատս զմայլեն։
Սիրեն նոքա՝ վարել ըզկեանս ի տունս օտար՝ զերդ ստրուկ,
Քան յաշխարհի իւրեանց սիրուն՝ լինել ազատ՝ բարեշուք։

ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆՑ.

Ի Բաքու։

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ ՄՇԱԿ.

Գիշեր լինէր, աստեղաց բոյլ շողայր յերկին կապուտակ,
Լուսին նազէր ճախր ընդ այն ծիր, եւ լոյս սփռէր անապակ.
Աստղ ցոլայր եւ գայր այլ նոր, մանկանացուն կայր յակնիւ,
Խոկայր, ջեռնոյր, ոյժ տայր մտաց, գիտել նոցա պատճառ դեռ:
Ռամիկն պարզուկ կարծէ անշուշտ, այն մեռելոյ լինել աստղ՝
Որ անց գնաց ինքն եւ ստուեր յանյայտութեան յովկիան.
Իսկ որ զտեղի աստեղն կալաւ՝ է նորածնոյ այն աստղ,
Զոր էն Աստուած ած ի յաշխարհ, ընդ վերճեմեալն յաւիտեան:

. . . . .

Այլուր նոր խումբ ակումբ առեալ՝ զմեղեղիս յօրինեն,
Երգեն եւ լան, եւ հեկեկանք խեղդեն զձայն ողբանուէր.
Հայ մշակաց է թշուառ խումբ, յեց ընդ դեւոյն, խիղբ ընդ ծունկն,
Վտարանդի յերկիր օտար, յուշ տան ձայնին, որ հնչի յունկն:
Ահա այս խումբ՝ որ դեռ արթուն ի գիշերոյ լուռ պահուն՝
Մրմունջ բառնան սպասեն լուսոյն, փոյթ չեն նմա աչաց քուն.
Ոմն ընդ տաղեր իւր տխրական յիշէ զմայր կաթնատու,
Այլ ոմն ընդ բամ հեկեկանօք զհայր յիշէ խնամածու:
Զիւրեանց յիշեն թշուառ մանկտիս, երիկամունք կան ի դող,
Հեծեն, եւ լան, եւ աչաց բիբք յորդ արտասուս կան ի լող.
Յիշէ մշակն եւ սգայ, եւ յուսահատ ասէ, բայ,
Եւ մեր արդեօք աւուրք գայցեն, յորս այս տխուր աչք ոչ լայցեն:
Այս խումբ է, ո՛հ, Հայ մշակաց, զաղթ ընդ օտար աստեղօք,
Այս խումբ է ո՛հ, պանդուխտ Հայոց գիշերն համբուն Թաց աչօք.

Լա՛ն, հառաչեն, ընդ հառաչանս զանուն յիշեն սիրելեաց,
Զորդւոց կանանց զսէր յիշեն, որք ի նեղ խուղ դոչեն, Հա՜ց:
Հայ մշակ զգայուն եթող դհարսն ի լալին,
Չեռացաւ յայլ տեղիս հայթայթել անդ բարիս:
Հայ մշակ քաջասիրտ՝ որ զառիւծ սպատառէ,
Աստ, ո՛հ, աստ զլուխ ի թեք զիւր օրեր աւաղէ.
Ցնորք գան եւ գնան, Հայ մշակ դալկահար՝
Զգետնի զարկանի, յիշելով զսիրահար:
Պանդխտին սիրահար ձեռն ի ծնօտ վշտահար՝
Լայ զիւր բաղդ զիւր փեսայ զեղեալն բացակայ:
Հայ մշակ ընդոստնու սթափի ի ցնորից,
Լու ի լու առ ընկերսն՝ տուտ բանայ անդ խօսից:
Հա՜յ եղբարք, մինչեւ ցե՞րբ, մինչեւ ցերբ յուսահատ,
Ցրնտանեաց տարագիր՝ աստ կայցեմք ի վհատ:
Զմեր հաւ յիշեսցո՛ւք, զայն արի վեհ արանց,
Թէ նորա եմք որդիք՝ յորդեսցուք զուխս արեանց.
Մինչեւ ցերբ անօրէն արք մոլի մարդախանձ
Քակեսցեն զմեր տուն, ի լնուլ զիւրեանց գանձ:
Յիշեսցուք, Հա՜յ եղբարք, հօր մերոյ բան վսեմ,
Եթէ եմք ժառանգորդ հօր փառաց աննսեմ:
Յիշեսցուք, թէ արին զի՜արդ արկ ի գետին
Զայն բլուր մեծղի, զայն Նեբրովթ սկզբային:
Յիշեսցո՛ւք զվեհն Հայկ մարտնչող այն արին,
Թէ զի՜արդ սակաւուք սատակեաց զԱսորին:
Յիշեսցուք հօր մեր բան, Հայկ մտաց վեհ ծնունդ,
Թէ զի՜արդ զորդիս իւր յորդորեաց ի մարտ թունդ:
Կամ մեռցուք, ասէր նա, կափուսցուք զմեր աչք,
Զդիտել մեր որդւոց եւ թոռանց վայ եւ կանչք,
Կամ կացցուք յաղթական ի կրկէս խնդմական,
Ի թափել զմեր տուն ի վատաց Նեբրովթեան.
Ոգի առցուք, միշտ յաղթեսցուք. թէ որդի եմք մեր հաւու,
ԶՔուրտս վանեսցուք, որ յար զերփէ, 'ւ ժանտ բազմութեան կարդայ լու:

. . . . .

Զգոն մեր կեանք, էր երկնչիմք, շունչ մի ունիմք եւ հոգի.
Մի՛, մի՛ Հային թեքել զգլուխ, մինչ ի չարաց անարգի:
Աստ մթերեմք գանձս ոսկւոյ քաղցու սովու տոկալով,
Անդ անօրէնք զմեզ զերփեն, տօնս յօրինեն խնդալով:
Ընդ արշալոյսն, բարեկամաց քաղցրիկ ողջոյն տամք կացնի,
Տարաւ ցնաշ յոգոց հանեմք, ձեռք ի տապար անօթի.
Զհաց ցաւոց ճաշեմք տրտում, ընթրիս առնեմք անխնդում,
Աչք լող ի ծով գիշերն համբուն, թարց նիրհելոյ յառնեմք զուարթուն:
Ո՜հ, չկարեմ ժուժել այլ եւս, սիրտ իմ փղձկի յարեան ծով,
Սարսուռ զինեւ պատի արդէն, այրիմ, տապիմ ի հրոյ բով.

Վրէ՛ժ, գոչեմ, անմեղ արեանց, զոր Քիւրտք Թափեն անխնայ,
Վրէժ սրբութեանց Անմահ Գառին Աղգայնութեան մեր վկայ։
Ո՜հ, Հայ եղբարք, զոր՞ պողովատ մանգաղ ի հունձ յօրինէք,
Ո՞չ կարիցէք ի սուր փոխել զորօրինակ Քիւրտք առնեն։
Եթէ նոքօք Քիւրտք անօրէնք յաճախ զմեզ խրատեն,
Ընդէր է մեզ կալ ի խոնարհ, եւ ոչ զնոյն մեք գործեմք։
Մի է հաստիչ ամենայնի, եւ մի նորուն կամաց ծիր,
Եթէ միում զայն շնորհեաց՝ ո՛չ զլանայ վասն մեր։
Մեր սիրտ դեռ եւս մինչ ցարդ ժուժեն՝ զի կամք դերի մեր գերեաց,
Զորս հսկայից մեր քաջ հարանց ձեռք ի դերի աստ խմբեաց։
Մեր սիրտ վառուժ, ո՛հ, ոչ ի բնէ, յախամայից արդ ժուժէ,
Խոնարհ ի գլուխ, այնց վատարանց հլու սպաս հարկանէ։
Մեր Տիգրանայ քաջ արքայի թէ եմք որդիք հարազատ՝
Խիզախեսցուք ընդ դէմ չարաց, հարցուք յերկրի անվկանդ,
Զլեարդ ընդ Թոք քանցեալ ի բաց ի նիշ ուժոյ Հայ բազկի,
Սպառեսցուք զճետ անիծեալ, զորդիս կեղծեալն վիշապի։
Թէ Վահագնի ի մեզ եռայ արիւն աշխոյժ այրական,
Թո՛ղ հնչեսցին ընդ այն ի փանդիռ եւ մեր անուանք յաղթական։
Մանկունք Գողթան Թող ձեռք ի քնար Թրթիռ տայցեն լարերաց,
Թո՛ղ ընդ այն վէպ վեհ Վահագնի մեր յիշեսցի գործ քաջութեանց։
Ապա թէ ոչ մերս վաստակոց զօտարս առնեմք ժառանգորդ,
Ի մեր երակ ո՛չ ներգործէ մերոյ հարանց արիւն յորդ.
Լա՛ւ է, եղբարք, լա՛ւ է բառնիլ անձանց մերոց յազգէ մեր,
Մինչ ոչ փայլին զործովք հարանց յասպարիզին մարտազոռ։
Ա՛յո, զոսկի աղտոտէ ժանգ, փայլից նորա ոչ տայ նիշ,
Ժանդ անպիտան է Թոյլ որդի, ժառանգ փառաց աստեղց նիշ։
Արդ՝ Հայկ երբէք ծնաւ որդիս լինել Քրտաց ի գերիս,
Մինչ մեք ի նոյն՝ ծածկեմք զերթ ժանգ, հարանց մերոց սխրալիս։
Արդ՝ Հայ եղբարք, զի՞նչ այս մեր կեանք, տրտում, տխուր եւ նկուն,
Թէ զմեր սիրեմք զորդի զկին զհայր զմայր վշտասուն՝
Ոչի առցուք զէթ անգամ մի՛ փորձ փորձեսցուք զմեր բաղդ,
Կամ քաջութեամբ մեռցուք անդէն, եւ կամ դարձցուք քաջայաղթ.
Յայնժամ սրբին մեր արտասուք կամ ի տխուրն գերեզման՝
Հողւով փայլեալ զերթ քաջ Վարդան եւ ընդ անկեալսն զօրական։
Կամ կեցցուք աստ անդորր կենօք ընդ ընտանիս բարեբաղդ՝
Զանուն Թողեալ ի յաշխարհի, կեալ ընդ յաշխար բարեբաստ։

ՍԱՐԿ. ԵՆՈՎՔ ՄՈՎՍԷՍԵԱՆ։

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ Ի ԲԻՒՐԱԿԱՆ.

23-ն ամսոյս Երկուշաբթի օր ի Բիւրական գնաց Վեհ. Հայրապետ։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ.

Ի 4-ն ամսոյս Ատրպատականի Վիճակին Հայոց նորընտիր Առաջնորդ Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս մեկնեցաւ աստի ի Ս. Էջմիածնէ, և զկնի ինն աւուրց հասնելով ի Դաւրէժ արտաքոյ կարգի ընդունելութիւն գտած է։

ԱԽԱԼՔԱԼԱԿԱՅ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂՕՐԱՅՔ.

Ախալքալակայ նահանգում ընդամէնը կան 99 գիւղեր, որք կազմում են 4679 տուն կամ ծուխ. այս գիւղերից 51ը բոլորովին Հայերի գիւղեր են, 10ը` Հայ-կաթոլիկների, 8ը Դրացիների, 8ը Դուխապօռների, 12 Տաճիկների, 2 Յոյների և 8ը գիւղեր ևս խառն են վերոյ գրեալ ազգութիւններով։ Սորանք բոլորը միասին են, 42653 հոգիք —22329 արական սեռի և 20324 իգական սեռի։

Այս բնակիչները պարապում են առհասարակ երկրագործութեամբ և անասնապահութեամբ. երկրագործութիւնը նահապետական հին դրութեան մէջ է։ Այր մարդիկ տարուայ երեք եղանակներում աշխատում են չարաչար և անկանոն կերպով. իսկ ձմեռը, որը չորս ամսից աւելի է տեւում, հաւաքուած և նստած տաք գոմերում պարապ և անգործ, տղայական առասպել պատմութիւններով, իւրեանց ձիերն և գոմէշներ գովելով են պարապում ու զուարճանում *)։ Շատ քչերը սորանցից իւրեանց երկրի բոյսը տանում են վաճառելու Աղպուլաղ, Մանգլիս, Ախլցխայ և Թիֆլիզ և այն տեղերից իւրեանց տան հարկաւորեալները գնելով վերադառնում. իսկ մեծ մասը տանից դուրս անգամ չեն գնում, իւրեանց աշխատութեան արդիւնքը գիւղի մէջ տեղնիտեղը փօթրատչիկներին, նոցա գործակատարներին և չարչիներին են վաճառում։

Մեր այս գիւղացիները աւանդապահ, և ջերմեռանդ են դէպի իւրեանց կրօնը և եկեղեցին և նոցա սպասաւորները։ Նիւթական դրութեամբ չեն այնքան չքաւոր. նոցա մէջ կան բաւականին հարուստ քէհաներ, առհասարակ դոցա ամէնքի դրութիւնը ապահովուած կը լինէր` եթէ ստորին դասի վերայ ծանրացած չը լինէր ագահ վաշխառուների և կեղեքիչ վաճառականների հարստահարութիւնքը, և մանաւանդ եթէ բաւականանային իւրեանց առտնին սովորական կեցութեամբ առանց հետևելու անսովոր կործանիչ և շռայլ ծախսերու։ Սոքա չափից դուրս գործածում են արաղը, կարող եմ ասել մեծ և փոքր վարակուած են արբեցութեան չար ախտովը և ամենևին անբարոյականութիւն և մեղք չեն համարում այդ հոգևորականներից սկսած մինչև վերջին ռամիկը։

Մտաւորական կողմից թաղուած են դեռ ևս տգիտութեան թանձր մառախուղի մէջ և անտես արած իւրեանց բնածիր ընդունակութիւնքը` չը նայելով թէ իւրեանց գաղթականութիւնից անց էր կացել արդէն քառասուն տարիներ, դեռ մինչև ցայսօր չեն սթափած` մտաւոր թմրութիւնից։ Դեռ ևս ոչ մի գիւղում` կանոնաւոր ծխական դպրոցներ չեն բացուած հակառակ մեր ազգասէր Վեհափառ Հօր բաղձանքների և այնքան թախանձանքներին։ Շատ նախանձելի կը լինէր եթէ մեր գիւղերի տանուտէրները, հարուստ և առաջաւոր քէհաներն, բարեկրօն ծխական քահանաները, որք ժողովրդեան մէջ մեծ համարում ունին և շատ գործեր են առաջ տանում, մանաւանդ Հայ գործակատարը ամենայն սիրով և ջերմեռանդութեամբ գլուխ քաշեն և աշխատեն առաջ տանել հասարակաց բարօրութեան համար աշխատող Վեհափառ Հօր սուրբ կամքը իւրեանց զաւակների կրթութեան համար։

(*) Մեր խօսքերը բոլորովին վերաբերում են մեր Հայ գիւղացիներին։

Մի քանի մեծ գիւղերում տարեկան 50 կամ վաթսուն րուբլի վարձով կարդացնում են մի քանի տիրացուներ գիւղի մանուկներին այբ, բեն, կեմ եւն, այն եւս միայն ձմեռուայ եղանակում գոմերի մութ և խոնաւ անկիւններում։

Նահանգիս գիւղերի մէջ այն է Բարալէթի և Քիլտայի մէջ բացուած կայ տէրութեան հրամանով և ծախսով 2 նախակրթական ուսումնարան Վրաց մանուկների համար։ Անցեալ տարում տէրութեան հրամանով շինուեցաւ և վերջացաւ Նահանգիս մէջ ինն ամբարանոցներ, հացի սուղ տարիներում հասարակութեան սովից ազատելու և ապահովացնելու համար։

Գովելի է մեր այս գիւղականների նահապետական հիւրասիրութիւնը, որք ամենայն ժամ քրիստոնէավայել սիրով բաց են անում իւրեանց դռները ամենայն օտարականներին առջև, օրերով և շաբաթներով անտրտունջ հիւրասիրում ուտեցնում և խմցնում են, և ոչ մի աղքատի եւս չեն խնայում և անտես առնում իւրեանց ձրի ողորմութիւնը։

Կանայք շատ պարկեշտ և աշխատասէր են, նոքա իւրեանց տնական ծառայութիւնքը կատարելից ի բաց աշխատակից են լինում իւրեանց մարդկանց դաշտային և այլ աշխատութեանց մէջ, հնձուած հասկերը հաւաքելով, դարսելով, կալսելով եւն։ Տանը ջուրն եւս կանայք են բերում ուսով և ձեռներով՝ առաւելապէս աղջկունք։

Հարսների կեանքը նեղ և շրջափակ դրութեան մէջ է դեռ եւս։ Նոքա իւրեանց մարդկանց կասկածոտ և հրամայող վարմունքի ծանրութիւնը տանելից ի բաց պարտաւոր են ամենայն հնազանդութեամբ, լուռ, անխօս և ծածկուած երեսով ծառայել սկեսուր սկեսրարից սկսած մինչ տան ամենափոքր տղային։ երբ մի երկու զաւակաց տէր լինի՝ կարժանանայ այնուհետև մի քանի ներողամտութեանց այն է բանալու իւր երեսի ծածկոցը տան փոքրերի մօտ և նոցա հետ խօսելու, վերջապէս մի քանի տարիներից յետոյ էլ կը խօսէ միւս հասակակիցների և սկեսուրի հետ, իսկ սկեսրարի հետ մինչև ի մահ դատապարտուած է անխօս և անբարբառ մնալ մի քանիսների բացառութեամբ։

Սորա հակառակ աղջիկները վայելում են շատ ազատութիւն, նոքա համարձակապէս խօսում են ամենայն ծանօթ և անծանօթ մարդկանց հետ, գնում են աներկիւղ զբօսնելոյ և ման գալու կանաչազարդ դաշտերում, մարգագետիններում և արտօրայքում և այն տեղերը գիւղի երիտասարդների հետ ազատօրէն տեսակցում, խօսում ու զուարճանում են և մինչև անգամ պատահում է ոմանց սիրահարուել, մէկ մէկու հետ սիրոյ և միութեան դաշն և պայման դնել աղբիւրի ճանապարհում, գոմերի մէջ հարսանեաց պարահանդէսների առեն, թէպէտ սորանցից շատ քչերին պատահում է հասնել իւրեանց նպատակին, որովհետև այս տեղերը ոչ թէ տղայք են յայտնում կամք ամուսնանալու, այլ ծնողք իրենք իրանցից երբ կամենում են նշանել իւրեանց տղայքը՝ կանչում են նախ քահանային և ուղարկում աղջկայ տիրոջ մօտ յայտնելու իւրեանց մտադրութիւնը և ապա քահանայի և մի քանի բարեկամների կամ գիւղում համարում ունեցող անձերի հետ միասին գնում են աղջկայ տանը և խնդրում են ծնողաց համաձայնութիւնը, (տղային և աղջկան համաձայնութիւնը հարցնելու հարկ չկայ. որովհետև նոքա ըստ սովորութեան պիտոյ է կուրօրէն հնազանդին ծնողների կամքին, առանց ընդդիմութեան)։ Աղջկայ տէրը թէև շատ կամք եւս ունենայ տալու իւր աղջիկը, այնու ամենայնիւ մի քանի ժամանակ զանազան պատճառներով բացասում էր խնամախօսների խնդիրը և այդպէս մի քանի օրեր և շաբաթներ և երբեմն ամիսներ կրկնուում է այդ միջոցների երթևեկութիւնը և այդ օրերում մեծ և շռայլ ծախսեր—կեր ու խումներ է լինում աղջկայ տանը։ Այդ ծախսերը լինում են տղայի կողմից, որը առաջուց պատրաստութիւն է տեսնում և ուղարկում միջնորդների ետևից, որք գնալով երկար ու բարակ խօսելով և արաղի անչափ գործածութեամբ կատարները տաքացնելով հազիւ հազ համաձայնեցնում են աղջիկը տալու. այնուհետև առաջ է գալիս [illegible] [illegible] խնդիրը, թէ որքան տալու էր տղայի տէրը։ Հատէմասին մեր գիւղերի մէջ մնած այն չար սովորութիւնն է, որ աղջկայ տէրը պահանջում է տղայից կամ տղայի ծնողից փող և ընծաներ իւր

համար, այդ պահանջը լինում է 20 կամ երեսուն րուբլիից մինչև 150 րուբլի փող և զանազան հանդերձեղէններ, իւր համաձայնութիւնը տալուն համար միայն։ Շատ երիտասարդներ իւրեանց աղքատութեան պատճառաւ չը կարողանալով վճարել այդ ագահ ծնողների պահանջը՝ կամ հրաժարուել են և կամ այլ անվայել միջոցների դիմել և կամ փախցրել են։ Այս մասին բոլորովին հակառակ է այս տեղի սովորութիւնը Վրաստանի սովորութեան. այն տեղերում աղջկայ տէրն է աւելի ծանրաբեռնուած ծախսերով, իսկ այս տեղ տղայի տէրը։

Մօտ տարիներս գիւղերի կանայք ևս ընկած են թանկագին շորեր հագնելու և շատ ոսկի գցելու շռայլութեանց մէջ։ Չայի գործածութիւնն ևս քիչ քիչ ընդհանրանում է սոցա մէջ.

Շատ գովելի են իւրեանց աշխատասիրութեամբ և չափաւորութեամբ մեր Ախլքալակայ սահմանում բնակող Դուխաբօռները։ Աւելորդ չէ մի քանի խօսք ևս սորանց վերայ ասելը։

Սորանք գաղթուած են Ռուսաստանի Տաւրինեան նահանգից և են բոլորը 5235 հոգի։

Այս Դուխաբօռները շատ աշխատասէր են, պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ, իւրեանց երկրագործական աշխատութիւնից ի բաց մշտապէս ամառ և ձմեռ անդադար պարապում են ձիասայլերով և սահնակներով բեռնակրութեամբ։

Սորանք հաւատարիմ, խաղաղասէր, չափաւորութեամբ և միատեսակ *) ապրող մի ազգ են։ Միայն յամառուած նախապաշարման մէջ ամենևին չեն պարապում ուսման ոչ իրանք և ոչ իրանց որդիքը. դոցա մէջ շատ հազուագիւտ է մի գրել և կարդալ գիտացող անձն։ Դորանք կրօնը սովորում են իւրեանց ծերերի աւանդութեամբ. հաւատում են սուրբ Երրորդութեան և պաշտում նորան, առանց կրօնական ծէսերի. չունին ոչ եկեղեցի և ոչ քահանաներ, շաբաթը երկու անգամ ունին սովորութիւն հաւաքուել մի տան մէջ և այն տեղ լսել սուրբ պատմութիւններ և երգելով գոհութիւն տալ Աստուծոյ. երգերը ասում են գլխաւորապէս աղջիկները. պահում են քրիստոնէից ամենայն կիւրակէները։

Սոքա իւրեանց ամենայն գործերը վերջացնում են իւրեանց մէջ. սորանցից համարեա տարին մի գործ անգամ հազիւ է պատահում կառավարութեան տրուած՝ այն ևս քրէական գործ եթէ պատահի։

Սորանց սովորութեան հակառակ է ընդունել և իւրեանց վերայ կրել տէրութիւնից տրուած շքանշաններ կամ վկայութեան և գովութեան թղթեր, ինչպէս չը կրեցին սորա տանուտէրների և շինական դատարանների նշանները և անցեալ տարուայ աշխարհահանդէսում ներկայացրած լաւ լաւ ձիերի, և այլ անասունների և ձեռագործների համար ուղարկուած արծաթեայ մետալները և գոհունակութեան թղթերը։

Սորանք պահում են լաւ տեսակ, ընտիր ցեղի ձիեր, եզներ, կովեր և ոչխարներ։

Սորանք կարելի է ասել առհասարակ հարուստ են, մի քանիսների բացառութեամբ։ Սորանց մէջ մի կին՝ որը Տաւրինեան նահանգից գաղթելու առեններ հասարակութեան շատ բարիք անող և զանազան օգնութիւններ տուող մի բարերար իշխանի վերջին մնացորդն է, ասում են ունի մօտ մի միլիոնի կարողութիւն։

Աշխատութեան մէջ սորանց կանայքը աւելի գերազանցում են իւրեանց մարդկանցից. գործում են ազնիւ տեսակ շալեր, գուլպաներ, ձեռնոցներ և տան հարկաւորեալ այլ և այլ իրեր։

Մի տեսակ աժանագին չթից և միտքալից ի բաց համարեա բոլոր ունեցածը և ապրուստը իւրեանց ձեռքերի աշխատութիւնից է դուրս գալիս։

Ցանկալի էր որ մեր ազնիւ Հայ կանայքն փոխանակ իւրեանց անձը տալու նորասիրութեան և շռայլութեան, փոքր ինչ աշխատէին տանտիկնու-

---

(*) Երկու երիտասարդներ գնալով քաղաք այս մօտ ժամանակներս ցանկանում են և առնում իւրեանց համար մի մի եափունճայ և գոր գորանցով վերադառնում են գիւղ. գիւղացիք տեսնում են այս երիտասարդների եափունճիքը, իսկոյն միւս օրը հաւաքվում են ծերերը և ժողով են կազմում, բերել են տալիս երիտասարդների գնած եափունճաներն ևս հետները, հասարակութեան առջև այդ եափունճաները մասմաս կտրատելով իւրեանց ևս սաստիկ անարգում և պատժում են, որ հակառակ սովորութեան իւրեանց տնական մաշտակներով չը բաւականանալով հետևած էին նորասիրութեան։

թեան, ձեռագործութեան, կարի, ձևի և չափաւորութեան ու խնայողութեան։

ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի Գ. Ախլցխա։

ԱՒԵՏԱՐԱՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԻ.

Այս օրերս Ախալքալաքայ բնակիչք երկու հօրեղբօրորդիք Խաչատուր և Կարապետ Տէր Մինասեանցներ՝ Ստեփաննոս Քահանայ Առաքելեանցի յորդորանօք՝ մի հին գրչագիր Աւետարան և նորա վերայ արծաթեայ շղթայով կցուած մի փոքրիկ մասունք Ս. Յակոբայ, որք իւրեանց նախորդներից էր մնացած սոցա մօտ և դոցա պատճառով ի վաղուց հետէ իւրեանց տունը ուխտատեղի էր դարձած, ընծայեցին տեղւոյս Ս. Սանդխտեան Օրիորդական դպրոցին, որպէս զի այդ Աւետարանը դրուելով քաղաքիս եկեղեցում, դորա ուխտաւորներից գոյացած արդիւնքը տրուի Օրիորդական դպրոցի աղքատիկ աշակերտուհեաց օգտին, որը իւր արդիւնքի սակաւութեան համար շատ բարերարների օժանդակութեանը կկարօտի։

Աւետարանն է միջակ դրութեամբ՝ մի երեսը միայն արծաթապատ խաչելութեան պատկերով, գրուած Հայոց 355 թուականին, մագաղաթի նըման թղթի վերայ, բոլորագիր գրերով, որոյ վերջը, «Հանգիստ երանելոյն Յովհաննու Աւետարանչի» պատմութիւնից յետոյ կայ մի երկար յիշատակարան, որից քաղեցինք այս հարկաւորները։

«Այժմ Աստուածախաւս աւետաքարոզ սուրբ «Աւետարանիս ցանկացող եղէ Նուաստ որդի.... «և գրեցի զսա յաւժարութեամբ սրտի, և ես «Նուաստ Քահանայ սուտանուն Սիմէոն գրեցի «անարուեստ ձեռամբ».... ևլն։

«Եղև աւարտումն գրութեան սուրբ Աւետարանիս ի թուականիս Հայոց ՅԾԵ, յԱստուածազարդ հայրապետութեան Տեառն Մեսրոպա «Հայոց Կաթուղիկոսի և Քրիստոսապսակ թագաւորութեան Հայոց Կոստընդնեայ և արժանապատիւ եպիսկոպոսութեանն սրբասէր և Աստուածամեծար Արքեպիսկոպոսի Տեառն Ստեփաննոսի և ի գաւառիս Եկեղեաց և մայրաքաղաքիս Երզնկայ կոչեցեալ։ Նա և տեղի հանգստեան մերոյ, յորում գրեցաք ի սուրբ Փրկչիս դուռն Կամխայ ի յընտիր աւրինակէ»։

Արարատի անցեալ տարւոյ Հոկտեմբեր ամսագրի մէջ ինձանից գրուած և հրատարակուած տեղւոյս Պարալէթ գիւղի մասունքի մասին լսում ենք, որ Սուլդայ գիւղի Թորոս աղա Թորոսեանց հարուստ անձը 500 րուբլի է տուած այդ մասունքը ձեռք բերելու համար, բայց տէրը չէ տուած։

ԿԱՐԱՊԵՏ Տ. Ս. ՄԱՐԳԱՐԵԱՆՑ.

Ի Գ. Ախլցխա։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ.

(Շարունակութիւն):

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ.

Հասարակութիւն Գեօրան գեղջ	6	
Նոյն գիւղացի Սահակ Քահանայ	1	
,, Ալէքսանդր Մարուքեան		50
,, Առատուր Յարութիւնեան		60
,, Յարութիւն Մարուքեանց		20
,, Մովսէս Տէր Սուքիասեանց		60
,, Պետրոս Մանուկեան		40
,, Աւետիք Նիկողոսեան		40
,, Պետրոս Գալստեանց		50
,, Հախօյ Մարգարեան		40
,, Ստեփան Առաքելեան		50
,, Երեցփոխ Գաբրիէլ		40
,, Մարտիրոս Ղազախեանց		50
Քիւլլիճեցի Սուքիաս քահանայ Տէր Սուքիասեան	1	
,, Պապօ Սարգսեան	1	
,, Վարդերես Գօնագեանց	1	
,, Երեցփոխ Պօղօ Սահակեան	1	
,, Քերոբ Քօչանեանց	1	
,, Նազարէթ Սահակեան		50
,, Սիմէօն Տէր Մինասեանց		50
,, Սարգիս Խաչատրեան		25

Քիւլլիճեցի Կիրակոս Խումարեանց	1	
„ Աւետիս Կիրակոսեան		30
„ Կարապետ Գալստեան		20
„ Մարտիրոս Աւետիսեան		20
„ Մանուկ Գէորգեան		20
„ Մանուկ Պարոնեան		20
„ Յարութիւն Գալստեան		20
„ Պապօյ Պետրոսեան		20
„ Յարութիւն Քօչանեանց		50
„ Քերովբէ Բարսեղեան		25
„ Զաքար Տէր Սուքիասեան	1	
„ Մատթէոս Գիտանեան		20
„ Ելբակ Սարգսեան		30
„ Փիլոս Գրիգորեան		50
„ Եսայ Կարապետեան		40
„ Նազութ Յօհաննիսեան		10
„ Մկրտիչ Սուքիասեան		25
„ Հայրապետ Վարդանեան		10
„ Սրբուհի Սիմէօնեան		20
„ Սիմէօն Ոսկանեան		30
„ Յովհաննէս Մանուկեան		20
„ Պօղոս Մկրտչեան		50
„ Մարտիրոս Պօղոսեան		10
„ Պօղոս Պապոյեան		5
„ Սահակ Վարդանեան		10
„ Խաչատուր Կարապետեան		50
Հասարակութիւն Հաջիղարայ գեղջ	4	
Նոյն գիւղացի Գէորգ Քահանայ	1	
„ Աւէտ Արաջեանց		20
„ Սիմէօն Պապեան		20
„ Աւագ Սահակեան		10
„ Կիւրղի Քեօլմէն		10
„ Գրիգոր Զարկարեանց		20
Հասարակութիւն Սարմուսախլի գեղջ	6	
Նոյն գիւղացի Համբարձում Յակոբ-բեան		40
„ Մելիք Վարդանեան		30
„ Վարդան Մկրտչեան		25
„ Մեսրովբ Մելքոնեան		50
„ Գալուստ Օհանեան		20
„ Բէկլար Մելքոնեան		20
„ Աստուածատուր Յակոբեան		40
„ Սարուխան Յարութիւնեան		40

Սարմուսախլեցի Ղազար Մկրտչեան		20
„ Աւետիս Կիրակեան		20
„ Սարիբէկ Յարութիւնեան		20
„ Խալաթ Պետրոսեան		20
„ Մեհրապ Յովհաննէսեան		20
„ Տուտի Յովհաննէսեան		10
„ Պապի Սարգսեան		30
„ Միրզախան Յովհաննէսեան		20
„ Կարապետ Խաչատրեան		10
„ Ալօյ Յովհաննէսեան		10
„ Ղահրաման Ուլուխանեան		10
„ Արսէն Յովհանէսեան		30
„ Բաղալ Գրիգորեան		20
„ Մացակ Մովսէսեան		20
„ Աղալօյ Ղազարեան		20
„ Եագոր Գրիգորեան		15
„ Կարապետ Քահանայ Մելքոն-եանց		80
Հասարակութիւն Եաղուբլի գեղջ	7	
Նոյն գիւղացի Պօղոս Քահանայ Տէր Պօղոսեան	1	
„ Յովհաննէս Քահանայ Ազարեանց		80
Հասարակութիւն Բօղի գեղջ	10	
Նոյն գիւղացի Մատթէոս Տէր Կարա-պետեան	1	
„ Յովհաննէս Քահանայ Սահա-կեան	1	
„ Ղազար Մատինեանց	1	
„ Եսայի Քահանայ Տէր Եսայեանց	1	
„ Յակոբ Մատինեանց	20	
„ Վարդան Յովակիմեան		40
„ Սարգիս Տէր Սիմէօնեանց		60
„ Յովսէփ Տէր Եսայեանց	1	
„ Պետրոս Դանիէլեանց		50
„ Գասպար Յովհաննէսեան		50
„ Յովհաննէս Մկրտչեան		50
„ Վարդան Գրիգորեան		50
„ Յովհաննէս Սարգսեանց		50
„ Դաւիթ Օհանեանց		50
„ Գալուստ Ասլանեանց		50
„ Կարապետ Մարտիրոսեան		50
„ Առաքել Յովհաննէսեան		20
„ Մկրտիչ Գալստեան		50

Բօղեցի Մարտիրոս Յովհաննէսեան		40
,, Մովսէս Յարութիւնեան		30
,, Ռուստամ Յարութիւնեան		50
,, Սուքիաս Աբրահամեան		40
,, Մինաս Արզօյեան		30
,, Մանուէլ Յարութիւնեան		40
,, Սահակ Եղչանկեանց		20
,, Սահակ Յովակիմեան		50
,, Յարութիւն Այվազեան		20
,, Պօղոս Սարուխանեան		30
,, Յարութիւն Ջաքարեանց		20
,, Աւետիք Սարգսեան		30
,, Աւետիք Յովհաննէսեան		20
,, Դաւիթ Յովհաննէսեան		20
,, Ռուստամ Յարութիւնեան		25
,, Յովհաննէս Անտօնեանց		40
,, Առաքել Յակովբեան		50
,, Յովհաննէս Գոգչեանց		20
,, Մակար Պօղոսեանց		30
,, Սողոմոն Գրիգորեան		40
,, Ղազար Կօծինեանց	1	
Մեծ Ղարաքիլիսեցի Ամիրխան Շահնազարեանց	5	
Նոյն գիւղացի Յովակիմ Նալբանդեանց	5	
,, Յակովբ Նալբանդեանց	5	
,, Յովհաննէս Աբովեան	5	
,, Աստուածատուր Գէորգեան	3	
,, Մկրտիչ Միրզայեանց	2	
,, Աստուածատուր Շարբաթեանց	5	
,, Յարութիւն Ամիրբէկեանց	2	
,, Ամբակ Ղամբարեանց	2	
,, Գէորգ Պետրոսեան	3	
,, Վարդան Գալստեան	1	
,, Անյայտ ոմն	1	
,, Ստեփան Յովհաննէսեան	1	
,, Յակովբ Եաւրեանց	1	
,, Սարգիս Աղատեանց	2	
,, Գէորգ Հայրապետեան	1	
,, Սօսի Արսէնեան	1	
,, Սահակ Աբովեանց	3	
,, Գրիգոր Ռափայէլեան	1	
,, Ղազար Աղաբաբեան	2	
,, Յովսէփ Կօզօմանեանց	1	

Մեծ Ղարաքիլիսեցի Համբար Վանեցեանց	1	
,, Խաչատուր Հախինեանց	1	
,, Սահակ Ջալալեանց	1	
,, Սարիբէկ Տէր Յարութիւնեանց	2	
,, Կարապետ Քահանայ Տէր Պետրոսեանց	1	
,, Մկրտիչ Քահանայ Ազարեանց	1	
,, Ստեփաննոս Քահանայ Տէր Ստեփանեանց	1	
,, Արսէն Քահանայ Տէր Սիմէօնեանց	1	
,, Յարութիւն Քահանայ Զուրապեանց	1	
,, Աստուածատուր Խանզատեանց	1	
,, Յովհաննէս Մխիթարեանց	1	
Հասարակութիւն Վարդանլու գեղջ	3	
Հասարակութիւն Դշլախ գեղջ	5	
Նոյն գիւղացի Յակովբ Քահանայ Տէր Առաքելեան	1	
,, Մկրտիչ Քահանայ Գէորգեանց	1	
,, Յարութիւն Տէր Առաքելեան	1	
,, Մարկոս Կոստանդեան		20
,, Առաքել Շահինեան		20
,, Աւագ Քոչարեան		20
,, Պապօյ Համբարեան		20
,, Գէորգ Մնացականեան		20
,, Յակովբ Մկրտչեան		20
,, Յարութիւն Մարտիրոսեան		50
,, Աւետիս Համբարեան		20
,, Արշակ Անդրէասեան		20
Հասարակութիւն Բօղ-Աւզալ գեղջ	3	
Նոյն գիւղացի Յովհաննէս Յարութիւնեան		40
,, Նաւասարդ Մնացականեան		20
,, Կարապետ Պապիկեան		20
,, Պետրոս Մկրտչեան		20
,, Կոստանդ Գրիգորեան		20
Հասարակութիւն Դարբազ գեղջ	3	
Հասարակութիւն Ջօթուռ գեղջ	4	
Նոյն գիւղացի Մկրտիչ Վարդանեան	1	
,, Սահակ Ղազարեան		25
,, Սարգիս Ամիրխանեան		20

Զօթուքեցի Կիրակոս Մարտիրոսեան		20
,, Կարապետ Տէր Պետրոսեան	1	
Հասարակութիւն Համամլի գեղջ	25	
,, Նոյն գիւղացի Աւագ Քահանայ Տէր Սիմէոնեան	1	
,, Յակոբ Քահանայ Տէր Յովսէփեան	1	
,, Մկրտիչ Աւագ Քահանայ Տէր Կարապետեան	1	
,, Եզեկիէլ Յովբեանց		50
,, Յովսէփ Տէր Յովսէփեան	1	
,, Բարսեղ Տէր Յարութիւնեան		50
Հասարակութիւն Սպիտակ գեղջ	5	
Նոյն գիւղացի Աբգար Տէր Միքայէլեան		20
,, Յովսէփ Վարդանեան		20
,, Պօղոս Աւետեան		10
,, Մեսրոպ Տէր Վարդանեան		10
,, Բարսեղ Տէր Միքայէլեան		10
,, Թորոս Մանուկեան		10
,, Յարութիւն Մանուկեան		20
,, Սիմէօն Մնացականեան		20
,, Ղազար Պօղոսեան		20
,, Քօչար Մնացականեան		20
,, Գէորգ Սարգսեան		20
,, Սահակ Մելօյեան		10
,, Մելքիսէթ Առաքելեան		10
,, Գրիգոր Թադէոսեան		20
,, Աւագ Պետրոսեան		10
,, Յովհաննէս Քահանայ Տէր Խաչատրեան	1	

(Մնացեալն է յետագայս):

ՃԵՄԱՐԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

Ներկայ տարւոյս յառաջակայ Սեպտեմբեր ամսոյ մէջ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի նորակառոյց Ճեմարանի բացումը կարգադրուած լինելով՝ Վեհ. Հայրապետ յատկապէս երեք Վարդապետներ — Արժ. Արիստակէս Սեդրակեան, Գէորգ Սուրէնեանց և Վահան Բաստամեանց — խրկեց Ռուսաստանի Հայոց վիճակաց մէջ նշանակեալ տեղերէն աշակերտները ընտրելոյ և յղելոյ համար յատուկ հրահանգներուն համաձայն, որք մինչև ց20 Օգոստոսի այսր պէտք է հասանին և պատրաստ լինին։

Տաճկաստանի և Պարսկաստանի վիճակներէն ևս յատուկ Կոնդակօք աշակերտներ պահանջուեցան։

Յաջորդ թերթի մէջ պիտի հրատարակենք կոնդակաց, հրահանգի, Ճեմարանի հիմնական ծրագրի պատճէնքը և աշակերտաց թուոյն վերայ համառօտ տեղեկութիւններ։

ԼՈՅՍ ՀԱՆԴԷՍ.

Կ. Պօլսոյ մէջ Արժ. Ամայեակ Վարդապետ Դիմաքսեանի խմբագրութեամբ Լոյս անուամբ կիսամսեայ հանդէս սկսաւ հրատարակուիլ ներկայ ամսոյ 1 էն։ Պարունակութիւնքն են Կրօնական, Ազգային, Բարոյական և Ընտանեկան։

Յաջողութիւն և կարողութիւն կը բարեմաղթեմք՝ զի յիշեալ Արժ. Հայր՝ իւր աշխատութիւնը արդիւնաւոր յառաջ վարէ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ.

Շուշուայ Հայոց Հոգևոր դպրանոցի տպարանէն Արժ. Խորէն Վարդապետ Ստեփանէի խմբագրութեամբ հրատարակեալ Հայկական Աշխարհ Մանկավարժական և Կրօնական ամսագրի Ը և Թ թիւերը ի մի տետրակ լոյս տեսաւ։

Յաջողութիւն և կարողութիւն բարեմաղթելով՝ կյուսամք որ յիշեալ Արժ. Հայր ջանք չպիտի խնայէ ամսագրոյն օգտաւէտ պարունակութեանց հետ՝ նա և Հայկական լեզուին հարազատութեան և ոճոյն բարւոքման հետևելոյ համար:

ՀԱՇԻՒ

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՂՔԱՏԱՆՈՑԻՆ ՀԱՅՈՑ ՄՈՍԿՎԱՅ

Յանցելում՝ Մոսկվայու Հայոց Գասպարեան Աղքատանոցի Խորհրդարան՝ իւր վարչութեան 1873 անցեալ թուականի ելևմտից հաշիւը Վ. եհ. Հայրապետին մատուցած լինելով՝ նորա յայտարարութիւնէն կարևոր պարբերութեանց հետ աստ արժան կհամարիմք համառօտ հաշիւը տպել:

« Խորհրդարան Աղքատանոցին ընդ այսմ պատիւ ունի մատուցանել Վեհափառութեան Ձերում զհաշիւ Աղքատանոցին վասն 1873 ամի և ամենայարգոյաբար զեկուցանել թէ՝

Նախ՝ ներկայ հաշիւ ի վերայ հիման 10 յօդ. կանոնաց խորհրդարանին համդերձ մնացելովքն առ մին Յունվարի այսր տարւոյ դրամագլխօք և պարտեւպատշաճ վկայաթղթովք առաջարկեցաւ ի քննութիւն Մոսկուայաբնակ Հայ հասարակութեան ընդհանուր ժողովոյն ի 17 Մարտի անցելոյ ամի, որ քննեալ զայն ընդ ձեռն ընտրելոցն ի միջոյ իւրեանց երից անդամոց, եգիտ զայն ուղիղ և զդրամագլուխս Աղքատանոցին առ ձեռն պատրաստ, զորմէ կայացաւ եզրակացութիւն ժողովոյ և ստորագրեցաւ յամենից անդամոց ներկայ եղելոց:

Երկրորդ՝ քննութիւն առաջարկեալ հաշուոյն ցուցանէ թէ՝

Առ մին Յունվարի 1873 ամի մնացեալ էր յարկեղ Խորհրդարանի պէսպէս տոկոսաբեր թղթովք ըստ մատենին ելից և մտից, թղթադրամովք և մանրամասնիւք ըստ առանձին հաշուոյ . . 56464 60

Առ այս յընթացս տարւոյն միաւորեցաւ համդերձ տոկոսօք ընդունելովք յանընդհատ արդիւնաբեր տոմսակաց ընդ համարաւ 109.420 . . 2554 61

59019 21

Ծախսեցաւ

Ի ջեռուցումն, լուսաւորութիւն, նորոգութիւն շինուածոյ խորհրդարանին, ի սնունդ տնանկաց, վասն լուացից համդերձից, վասն ջրոյ և լցուցանելոյ զգինետունն սառամբք և այլոց ևս . . . 1490 97

Ռոճիկ դպրագրի, գրեան ի պէտս խորհրդարանի, դրաւոր պարագայք, հրաւիրական հրատարակութիւնք ի լրագիրս, նորոգութիւն անցաթղթոց տնանկաց, ընդօրինակութիւն նոյին և ծախք սուրհանդակատան 142 62

1634 59

Ի տաւչութիւն միանուագ և ամսական օժանդակութեանց ըստ եզրակացութեան խորհրդարանին և ի կրթութիւն Խօճայեվ օրիորդին . 960

2594 59

Յետ այնորիկ առ մին Յունվարի 1874 ամի մնաց յարկեղ խորհրդարանի պէսպէս տոկոսաբեր թուղթք և առձեռն պատրաստի դրամք ըստ մատենին ելից և մտից 55752 38

Թղթադրամք և մանրափողք ըստ առանձին հաշուոյ . . 672 24

56424 62

Պակաս քան զոր մնացեալն էր առ մին Յունվարի 1873 ամի . . . 39 98

Երրորդ՝ գտանէին ընդ պահպանութեամբ խորհրդարանին յընթացս 1873 ամի անձինք ինն, որք ըստ առաջնոյն վայելէին զբնակութիւն, զջեռուցումն, զլուսաւորութիւն և զսնունդն:

Յամսեան Յունվարի անցելոյ ամի մին ի տնանկաց կանցելեարիստ (դիւանական պաշտօնավար անուանց աստիճան) ազնուական Ս.ւետ Յովհաննիսեան փիրատով 84 ամաց փոխեցաւ յաստեացս և ի տեղի նո-

րա ընդունեցաւ ի խորհրդարանն Աժդէրխանի քաղաքացի այրի խուպիքով 72 ամաց:

Չորրորդ՝ յաւարտ ժամանակի ծերութեան իւրոյ պատուաւոր Միքայէլ Յարութիւնեան Ստեփաննեան ի պաշտօնի Անդամոյ խորհրդարանի Աղքատանոցին, Հայ հասարակութիւնն Մոսկուայի ի ժողովի իւրում միաձայն հաւանութեամբ ընտրեաց ի նոյն պաշտօն զնա վերստին զՊ. Ստեփաննեան երկեամ եւս ժամանակաւ, որ եւ մուտ գործեաց արդէն ի վարումն պաշտօնի իւրոյ:

Նախագահ Անդամ խորհրդարանի վերատեսչութեան
Յովհաննէս Յովհաննեան

Անդամք խորհրդարանի
Պատուաւոր քաղաքացիք
Միքայէլ Ստեփաննեան և
Մելքոն Փաննեան

Հոգեւոր անձն (Նախագահ)
Աւագքահանայ Յարութիւն Գէօքչեանց

Գանձակէն հետեւեալը խրկուած է:

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇԻՒ ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅՈՑ ԵԼԻՍԱՒԵՏԱՊՕԼՈՒ, ՍԿՍԵԱԼ Ի 1ԷՆ ՅՈՒՆԻՍԻ 1873 ԱՄԻ 31Ն ՆՈՅՆ ԱՄՍՈՅ ՆԵՐԿԱՅ 1874 ԱՄԻ.

Սիրելի Ազգայինք.

Հոգաբարձութիւնը Ազգային Հոգեւոր Դպրոցին Ելիսաւետպօլու՝ տարեկան աշակերտաց հարցաքննութիւնն, որ սկսեալ ի 27 էն Մայիսի տեւեց մինչեւ ց 9Ն ներկայ Յունիսի, վերջացնելէն յետոյ անհրաժեշտ պարտք է համարում իւրեան ներկայացնել ձեզ՝ առձեռն պատրաստի գումարի հետ և մի ամբողջ տարուայ եկամտից և ծախուց հաշիւն, սկսեալ ի մէկէն Յունիսի ցմին նոյն ամսոյ ներկայ տարւոյս, որպէս գրեալ են մի առ մի ի ներքոյ:

Եկամուտք.

Առձեռն պատրաստի գումար յաւելեալ յանցեալ ամէ	3512	80¼
Կապալադրամ քաղնիսի վասն միոյ ամբողջ ամի	846	
Վարձ իննը կրպակաց վասն ամբողջ ամի	783	60
Նուիրադրամ պսակաց	19	20
Աշակերտաց տարեկան վարձ	100	
Աջահամբոյր ուխտատեղւոյն Ս. Սարգսի	20	
Յեկեղեցական արդեանց	120	
Աջահամբոյր ուխտատեղւոյն Մուսուսայ	20	
Աջահամբոյր ուխտատեղւոյն Ս. Գէորգայ	2	
Վիկտորինեայ բիլէթ	600	
Տոկոսիք Վիկտորինեայ բիլէթաց	30	
Արդիւնք կրպակի մոմավաճառութեան	1499	87
Ի վարձ կնքոյ մոմոց առացեալ յերեց. Ս. Լուսաւորիչ եկեղ.	43	50
Գումարն	7596	97¼

Ծախք.

Ցընթացս ամբողջ տարւոյն տրւեալ է ռոճիկ ուսուցչաց, գործավարի և ծառայի	1356

Ի վարձ երկուց պուտկայից, գլրասեղանաց, աթոռոց, սափորաց, կաւիճի, մոմոց, ձղիննաց (ըռզաների), ղամի, երկաթեղինաց, շրջանակաց (չարչուայ), լուսամուտի, ապակեաց, խասիրաց, թղթոց, զմռոց, քաթանի, երկու հատ պըղընձեայ փարչից, գրատախտակները ու գրասեղանները ներկելոյ և կարկատելոյ, ի գին մի հատ թուջեայ վառարանի իւր սարօքն, ի վարձ ուսումնարանի սենեկներան կարկատանների, ի վարձ մի հատ նոր գրասեղանի, ուսումնարանի սեփհական կրպակաց շինութեան տախտակների, չորս հատ կազմեալ տումարաց, կրպակների (դրան) ճակատների ժեշտեայ տախտակներին, ուսումնարանի աթոռոց կարկատաններին, դրաս-

տանց վարժարանները վերանորոգելոյ, բաղնիսի ներսի ժեշտեայ խողովակներին և գրասեղանները նաշխելոյ տուաւ ընդամենն . 206 77

Ըղնիմացս ամբողջ տարւոյն տուաւ պրելի փայտից . . 24

Տուաւ ի գին մոսկվաձոյլ լպիտակ և դեղին կոշտ մոմոյ, մանածի և խնկոյ և ռոճիկ մոմավաճառին ընդամենն . . . 874 2

Գումարն է 2460 79

Ցեա ի բաց հանելոյն ի մայր մոյից եօթն հազար հինգ հարիւր իննսուն վեց ռուբլի և իննսուն եօթն ու մի քառորդ կ. գումարոյն՝ զերկու հազար չորս հարիւր վաթսուն ռուբլի և զեօթանասուն ինն կոպ. ծախսն, մնայ առձեռն պատրաստի գումար ընդամենն . 5136 18¼

Ի կրպակին մոմավաճառութեան գոյ առձեռն պատրաստ

	փթ.	ֆնտ.
մոսկվաձոյլ սպիտակ մոմ .	9	25
Դեղին ձուլեալ ,, .		34⅛
Դեղին կոշտ ,, . .	2	26
Խունկ		4
Սպիտակ մանած . .	1	1

Ուսումնարանն ունի ապառիկ աշակերտներէ ուսման վարձ . 190

Փոխանորդ Գանձանոյ եւ Օգն. Թեմական Վերատեսչի Հոգեւոր Դպրոցաց — Գրիգոր Վարդապետ Տ. Ստեփաննոսեան

Անդամք Հոգաբարձութեան { Պօղոս Մարգարեան / Աղա Վարդանեանց / Եղիշէ Մանուկի Գրիգորեան:

Գործավար

Իսրայէլ Տէր Գրիգորեան Մամիկոնեանց

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ·

Հետեւեալը հրատարակելոյ արժան համարելով՝ կգովեմք նամակագրին զգացմունքը:

Ահաւասիկ ազատամիտ մարդ մը, որ ոչ թէ Շիշմանեան էֆէնտիի կերպով՝ այլ ամենայն քաջութեամբ կը յայտարարէ իւր համոզումն ու հաւատքը և կը դառնայ հոն, որ անքակտելի վէմն է ազգութեան, ուրկէ ծննդեամբ և ոչ կամովին խոտորած կը գտնուէր, ինչպէս կը գտնուին հակառակ խել մը ազգայիններ, ինքզինքնին ազատամիտ կոչելով հանդերձ:

. . . Խմբագիր

Հռովմէական դաւանութեան մէջ ծնած ըլլալուս և մեր Հռովմէադաւան եղբարք իրարու հակառակ հայեցողութեամբ նկատելով զՊապականութիւնն՝ երկփեղկեալ ըլլալնուն, շատերն ինծի կը հարցնեն թէ ո՞ր կողմէն եմ, Հասունեա՞ն թէ Հակահասուն. և ես ալ փափաքելով՝ միանգամայն պատասխանել ամենուն, կը խնդրեմ որ հետեւեալ յայտարարութիւնն բարեհաճիք ձեր ընտիր թերթին մէջ հրատարակել:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ս. ԹԸՂԼԵԱՆԻ

Հասունեան և Հակահասուն, ըստ իս, երկու հակասութիւններ են, երկու հակառակ ծայրեր որոց մէջ ոչ մէկուն և ոչ միւսին վրայ կրնայ կռթնիլ մարդ՝ առանց հաւասարակշռութիւնը կորսնցնելու: Մին կ'ըսէ թէ պէտք է կուրօրէն հնազանդիլ Պապին. պէտք է իր ազգային իրաւունքները զոհել անոր, պէտք է հաւատալ թէ անսխալ է նա: Արդ՝ կուրօրէն հնազանդելու համար՝ պէտք է թօթափել իր բանականութիւնը կամ, պարզապէս խօսելով, պէտք է անբան ըլլալ, իր ազգային իրաւունքները զոհելու համար, պէտք է ապազգեաց, մատնիչ, ուրացող ըլլալ. և Պապին անսխալութեան ալ հաւատալու համար պէտք է դիցապաշտ ըլլալ. վասն զի միայն Աստուած է անսխալ:

Գալով Հակահասունեանց, ասոնք կը յամառին զՊապը ճանաչել իրենց գլուխ, մինչդեռ Պապը զիրենք չըճանաչեր իրեն անդամ՝, ասոնք միշտ

իրեն սկիզբն ըլլալով «Մենք քու զաւակներդ ենք» կ՚աղաղակեն, ան զասոնք կը մղէ «երթ յետս իմ սատանայ» գոչելով։ Ասոնք կը վկայեն թէ Արքայութեան բանալիները Պետրոս առաքեալէն Պապին անցած են, Պապը կը գոցէ իրենց դէմ երկնից դռները և ասոնք կը պնդեն թէ պիտի մտնենք արքայութիւն, բայց ի՞նչպէս պիտի մտնէք հո՛ն եթէ դուք ինքնին կը վկայէք թէ բանալիներն իր քով են և ուզած մարդուն կը բանայ՝ չուզածին կը գոցէ անոր դռները։

Արդ անոնք որ ինծի կը հարցնեն թէ ո՞ր հակութենէն եմ, Հասունեա՞ն թէ Հակահասուն, կը պատասխանեմ իրենց թէ ոչ մէկէն եմ և ոչ միւսէն, թէ այս երկու հակառակ ծայրերուն մէջ տեղը միջին կէտ մը կայ, հասարակութեան կէտ մը՝ յորում կրթնած է ամբողջ Հայ ազգը, յորում կը պահէ իր անունը և իր գոյութիւնը, այն է իր առաքելական ուղղափառ եկեղեցին՝ որոյ Քրիստոսադիր վէմը Թադէոս և Բարթողիմէոս առաքելոց ձեռքով հաստատուած է ի Հայաստան և զոր յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ պայծառացուցած և լուսաւորած է։ Արդ կը յայտարարեմ ամենուն թէ՝ ես ոչ Հասունեան եմ և ոչ Հակահասուն, այլ Հայ եմ և Հայ եկեղեցւոյ զաւակ և իմ անունս արձանագրել տուած եմ արդէն ի Հայոց Պատրիարքարանն։

Ս. ԹԸՂԼԵԱՆ.

Օրագիր, Թիւ 1225, Մայիս 12.

ԱՂՔԱՏԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Արշալոյսի մէջ կընթեռնումք.

Իզմիրի Աղքատասիրաց Ընկերութիւնն՝ իւր վաղեմի բարեկարգ սովորութեանը համեմատ, այս տարի ևս հրատարակեց իւր տարեկան ելևմտից հաշուեցուցակը՝ սկսեալ 1873 Մայիսի 1էն մինչև ցվերջ Ապրիլի 1874.

Այս հաշուեցուցակէն կռեսնուի թէ յիշեալ Ընկերութեան եկամուտը հասեր է ի 27,142 ղուրուշ, որոց վերայ յաւելցնելով անցեալ ամին Յուլիսի 1ին քաշուած վիճակահանութեան արդիւնքը 18,781 ղուրուշ, կընէ ընդամէնը 45,923։ Իսկ տարեկան ծախքը 22,193 ղուրուշ է. որով 282 չքաւոր հիւանդաց դարման տարուեր է։

Աղքատասիրաց Ընկերութեան դրամագլուխը բաղկացեալ է այժմ ըստ հետևեալ ցուցակին։

Փոքրիկ տուն մի, որ կարժէ ղուրուշ	5,336
Տոկոսով տրուած դրամ	22383
Ժողովելի պահանջք	25510
Դեղօրէից արժէք ի դեղարանի	20000
Ղուրուշ	50229

Աղքատասիրաց Ընկերութիւնը՝ որ ազգին խորին շնորհակալութեանը վերայ իրաւունք ստացած է, կազմեալ է ի 14 անդամոց, որոց անուանքն են։

Մեծարգոյ Տեարք.

Գրիգոր Նաայեան, ատենապետ,
Պօղոս Թ. Պերկամալեան, փոխ — ատենապետ,
Յովհաննէս Միրզա, ատենադպիր,
Սարգիս Գ. Պապիլէր, փոխ ատենադպիր,
Ստեփան Յ. Տէտէեան, արկղապետ,
Տօքթէօր Պօղոս Գ. Կոստանդեան,
Գալուստ Վէմեան,
Մարգար Խ Էքիզլէր,
Մելզոն Յ. Մաքսուտեան,
Յարութիւն Փափազեան,
Պետրոս Պարտիզպանեան,
Պօղոս Կ. Տիլպէրեան,
Սարգիս Թ. Չէլիք,
Վարդան Փափազեան։

Արշալոյս Արարատեան, Թ. 988, Մայիս 18։

ԺԴ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ.

Ազգային Սահմանադրութեան Տարեդարձի հանդէսն այս տարի ևս ըստ սովորութեան կատարուեցաւ ի Հիւնքեար Իսկէլէսի, թէպէտ սակայն ըսելու համար՝ նախորդ տարիներէն զգալապէս նուազ շքեղութեամբ։

Կիրակի առաւօտուն մէկ քանի նաւամատոյցներէ դրօշակներով ու կանանչեղէնօք զարդարուած տասնի չափ մեծ և փոքր շոգենաւներ մեկնելով, երկու երեք հազարէն աւելի երկսեռ հան-

գիտականք և բազմաթիւ ալ օտարազգի ընտանիքներ Պէյքօզի նաւամատոյցը կը փոխադրէին, ուր Գեր. Մամբրէ Սրբազան եկեղեցին հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանելով, յաւարտ ժամերգութեան ազդու ատենաբանական քարոզ մը խօսեցաւ, որով Ազգ. Սահմանադրութեան օգուտները բացատրելով՝ սիրոյ և միաբանութեան և Սահմանադրութիւնը հոգւով չափ պահպանելու յորդոր կարդաց ժողովրդեան, Վեհ. Սուլթանին, Կայսերական գերդաստանին, Պաշտօնէից, Նորընտիր Սրբազան Պատրիարքին, Ազգ. Ժողովներուն, Խորհուրդներուն և Երեսփոխանաց կենացը ուղղած բարեմաղթութեամբը աւարտելով իւր քարոզը։

Եկեղեցւոյն փողոցն, նախորդ տարիներուն նըման, դափնեայ կամարով մը հանդերձ, որոյ վերայ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԺԴ. ՏԱՐԵԴԱՐՁ բառերը կը տեսնուէին, կանանչեղէններով զարդարուած էր, սակայն այս անգամուանը սա առաւելութիւնը ունէր նախորդ տարիներուն վրայ՝ որ ազգայնոց ոմանց տուներն ու շէնքերն դրօշակներով զարդարելէն զատ, հանդիսականաց անցնելիք ճամբուն վրայ գտնուած օտարազգիներուն սեփականութիւնն եղած շէնքերուն, տուն, խանութ ևլն. մեծ մասին ճակատն ալ ի պատիւ հանդիսականաց՝ նոյնպէս ալ և ալ դրօշակներով զարդարուած էին։

Գեր. Մամբրէ Սրբազանին քարոզովը սոյն հանդէսին պաշտօնական մասն աւարտելով, հանդիսականք սկսան նուագային եղանակօք և դրօշակներու առաջնորդութեամբ խումբ խումբ երկսեռ բազմութեամբ դէպ ի Հիւնքեար Իսկէլէսի զբօսավայրը յառաջանալ, ուր դաշտային հանդէսն սկսաւ 5—6 հազար հանդիսականներով, որոց մեծ մասը Շիրքէթը Խայրիէի շոգենաւներով եկած էին։ Ժամը մինչև 10՝ հանդիսականք առանձին խմբակներ կազմելով կատարեալ բարեկարգութեամբ և առանց խռովութիւն մ'ընելու զբօսնելնէն յետոյ, որոցմէ այս տարի բնաւ անախօսութիւն մ'ընող չը գտնուեցաւ դժբաղդաբար, տակաւ առ տակաւ իւրաքանչիւրն իւր շոգենաւը նստելով մեկնեցաւ, Ազգային Տարեդարձի հանդէսն այս տարի ևս տօնելու սահմանադրական նախանձախնդրութիւններն այս առթիւ անգամ մ'ալ յայտնելու պատեհութիւն ունենալով։

Օրագիր Թ. 1248. Մայիս 28։

ԽՕՋԴԱՏԷՆ.

Զուեւայ աղետալի անցքերը մեր ընթերցողաց հաղորդելոյ արժան կը համարիմք։

Եօզկատէն սովի մասին հետևեալը կը գրեն մեզ ։

«Քանի մը շաբաթէ ի վեր գրեթէ ամէն օր անընդհատ տեղացած անձրևներէն սովու երկիւղը քիչ քիչ ցրուելով, ասդին անդին պահուած ցորեն, ալիւր ևլն. ևլն. շուկան լեցուիլ սկսաւ, որով օր ըստ օրէ ամէն բան զգալի կերպով աժննալու վրայ է, այնպէս կը յուսացուի որ եթէ ուրիշ տարիներու առատութեան չը հաւասարի, գէթ մեծ տարբերութիւն չունենար։

Տէրութեան կողմանէ շնորհուած մէկ միլիոն հօխայ ցորենին մէկ մասը՝ Խարբերդէն, Մալաթիայէն, Կեսարիա հասած է արդէն. անկէ ալ հոս պիտի երկուի, երբ հոս հասնի՝ ցորենի ալիւրի գները աւելի ևս իջնալուն տարակոյս չիկայ։

Տեղս գաղթող գիւղացիներէն՝ որոնք փողոցները ասդին անդին կը բնակին և մեծագոյն մասամբ մուրանալով կապրին. ամէն օր 5—6 մինչև 8 սովամահ պակաս չէ։ Ընդհանուր կուսակալէն նոր ստացուած հրամանին համեմատ՝ կառավարութիւնը օտարական մուրացիկները զօրանոցը հաւաքելու վրայ է, ուր հաց և ուտելիք պիտի տրուի անոնց կառավարութեան կողմէն. կը յուսացուի որ տեղւոյս բնիկ աղքատաց ալ հաց և ուտելիք բաժնելու միջոցներ ձեռք կառնուին. եթէ ոչ անոնց մէջ ալ կը մնայ կոտորածը՝ որք յետին թշուառութեան ծայրը հասած են. քանի մը ամիսէ ի վեր աշխատելու գործ չըլլալով՝ ունեցածնին կերած ծախած՝ և օրական ապրուստնին ճարելու միջոցներէն սպառ զուրկ են։

ԽԱՐԲԵՐԴԷՆ։

Պարձեալ մի և նոյն Հայրենիք լրագրոյ մէջ,

—Խարբերդէն հետևեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ։

«Ընկերութիւնս գրեթէ 200 բաժանորդ և 12 ուսումնական և ուսումնասէր անձերէ բաղկացեալ Տնօրէն Ժողով մի ունի։

«Երկսեռ վարժարան մի ունի։

«Իգական սեռինը քիչ մը յետադէմ է, լաւ վարժուհի չլինելուն, յիսնի չափ աշակերտուհի ունի։

«Երկսեռ վարժարանս՝ բաժանորդաց բաժինովը և ազգասէրներու տուած նուէրներովը կը կառավարուի։ Բաւական գումար մ՚ ունի։

«Ընկերութիւնս՝ հաստատ և օր ըստ օրէ յառաջանալու մէջ է։

«Ընկերութիւնս իւրն նպատակ ըրած է Հայաստանեայց գաւառները կրթել և կիւրակէ օրերը վարժարան և եկեղեցի բանալով ազգային, բարոյական, կրօնական և այլ և այլ դասեր աւանդել։

«Վարժարանս 40 աշակերտ ունի, յորոց 1 ը Կարսիկ անուն գեղէն, 4 ը Հիւսէյնիկէն՝ որ քաղաքէս գրեթէ կէս ժամ հեռի է, 2 ը Մէզիրէէն. 2 ը Խուլլու անուն գեղէն, իսկ միւս մնացածներն Խարբերդի չորս թաղէն։

«Աշակերտ մը չորս տարի անընդհատ վարժարան գալու համար ընկերութեան կանոնաց համեմատ ծնողաց ստորագրութեամբ պիտի վաւերանայ։

«Ծնողք և աշակերտք բաժանորդ գրուելէն զատ, ըստ կարողութեան ծնողաց՝ պիտի վճարեն ամսական 7, 10, 15 ղրուշ։

«Վարժարանս 3 կարգի բաժնուած է, Ա. կամ ստորին կարգ, Բ. և Գ. կարգեր։

«Չորս տարուոց վրայ բաժանեալ են հետևեալ դասերը, ճիւղերը վերցնելով գլխաւորները հոս կը գծենք։ Հայկաբանութիւն, բարոյական և կրօնական գիտութիւնք խառն, Ազգային և ընդհանուր պատմութիւն, Քրիստոնէական վարդապետութիւն, Տաճկերէն, Գաղղիերէն, գեղագրութիւն, ազգային երգեցողութիւն, եկեղեցական պատմութիւն, մարմնամարզութիւն, ընթերցանութիւն լրագիրներու և գրքերու հանդերձ ճարտասանական, տրամաբանական և բանաստեղծական բացատրութեամբ։

«1874 մայիս 13 ին ընդհանուր քննութիւն մի տրուեցաւ Ս. Կարապետի եկեղեցին՝ ի ներկայութեան հազարաւոր հանդիսականաց։

«Բողոքականութիւնը առաջուան պէս յառաջադէմ վիճակի մէջ չէ։

«Հայոց վարժարանները յառաջադէմ չլինելուն շատ մը հայ մանկտիք նոցա դաստիարակութիւնը կընդունին։ Միսիոնարք նայեցան որ չկրնան մեծ մարդիկներ համոզել, սկսան դպրոցներ բանալով մատաղ մանկտոյն՝ անգղիական կրթութիւն մի տալ, որով գէթ կարողանան իրենց նպատակ յառաջեցնել։

Հայրենիք Թ, 204, Յունիս 14։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1874 Թ.

Մ. Մ. Միանսարեանցի տպագրութիւնների գինը այս 1874 Թ. Տիփլիս (Tiflis) Նորա սեպհական տանը, Հայոց Վանքի Մեծ և Փոքր փողոցների անկիւնում, Մայր եկեղեցւոյ հանդէպ, Ս. Պետերբուրգ՝ իւր կացարանում, այսպիսի հասցէով.

Въ С.-Петербургѣ, на Михайловской площади, домъ 2, Жербина, кв. № 5, МИХАИЛУ МЕСРОПОВИЧУ МІАНСАРОВУ.-Russie, T.-Pétérsbourg, place Michel, maison № 2, de Cerbinne, log. № 5, Michel Miansarof (Miansariantz)—և Ս. Պետերբուրգէն (ոչ Տիփլիսէն) Ռուսաց տէրութեան ամենայն քաղաքները առաքելով, ճանապարհի (փոստայի) ծախքով հանդերձ։

Քնար Հայկական. ընդարձակ երգարան հանդերձ զանազան յաւելուածներով. ծանօթութիւններով և հայախօս առածներով (Lyre arménienne-recueil des chants). Ս. Պետերբուրգ. 1868, 8 ծալ, էջ 712։ Հայկական Քնարի այբբենական ցանկը

առանձին տպած 1870 Թ., 8-ծալ, էջ 32. երկուսը միասին.

մի օրինակ . 1-30

հինգ օրինակ . 5

Խնամատարութիւն երեխայոց (Komb, – éducation des enfants), – մարմնական և բարոյական, շարադրութիւն Կոմբի Անգլիացւոց թագուհու բժշկի, հանդերձ զանազան յաւելուածներով տպագրողի կողմից: Պետերբուրգ. 1868 Թ., 8-ծալ, էջ 300

մի օրինակ . 80

հինգ օրինակ . 3-50

Եդուարդ Լաբուլէի. Ազգային կրթութիւն, ա) ինքնակրթութիւն, բ) ազգային կրթութիւն, գ) ժողովրդական գրատուններ. Պետերբուրգ, 1867 Թ., 8 ծալ, էջ 108, հանդերձ յաւելուածներով տպագրողի կողմից.

մի օրինակ . . 40

հինգ օրինակ . . 1-50

Եւ կայ միայն Տփխիս. . . .

Կանոնաւոր և Վայելուչ Գրութեան Պատմութիւնը և Տեսութիւնը (l'histoire et la théorie de la calligraphie), հանդերձ զանազան ծանօթութիւններով, յաւելուածներով և գրասեղանների ու անատոմիկական ստուերագրերով. Ս. Պետերբուրգ. 1872 Թ. 8-ծալ, էջ 274.

մի օրինակ . . . 1

հինգ օրինակ . . 4

Հայկական կանոնաւոր և վայելուչ գրութիւն (գաղափարներ, օրինակներ) սև մելանով տպած (calligraphie arménienne). Լեյպցիգ. 1873 Թ., 4-ծալ, 5 1/2 թերթ, էջ 24. հանդերձ զանազան ստուերագրերով և պատկերներով.

մի օրինակը . . 40

Հինգ օրինակը Պետերբուրգէն ուղարկելով Ռուսիայի միւս քաղաքները . . . 1-50

Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան վարժութիւններ (Exercice de la calligraphie arménienne) №№ 1, 2, 3. 4 և 5, ջնջուող մելանով տպած, որ գրել սովորել սկսողները կամ վատ գրողները, տպածի վերայ սև թանաքով գրելով, դիւրութեամբ (հեշտութեամբ) վարժուին կանոնաւոր և վայելուչ գրելուն.

Վարժութիւն (exercice) № 1, սկզբնական խազեր մեծ 4-ծալ կէս թերթ, չորս երեսից բաղկացած.

հարիւր (100) օրինակը . . 2

Վարժութիւն (exercice) № 2, այբբենը և բառեր, մեծաձև, 4 ծալ երեք թերթ կամ 24 երես.

հարիւր (100) . 12

Վարժութիւն (exercice) № 3, գլխագրերը մեծ և միջին ձև, 4 ծալ կէս թերթ, չորս երես.

հարիւր (100) . . 2

Վարժութիւն (exercice) № 4, այբբենը և բառեր միջին ձևի մեծութեան տառերով, մի թերթ կամ 8 երես.

հարիւրը (100) . 4

Վարժութիւն (exercice) № 5, առանձին պարբերութիւններ և փոքրիկ հատուածներ մանր տառերով տպուած և թուանշաններ. կէս թերթ կամ 4 երես.

հարիւրը (100) . 2

Հայերէն կանոնաւոր և վայելուչ գրութեան տողացանցեր (transparent) №№ 1, 2, 3 և 4, գունաւոր կարմրագոյն հաստ մեծ թերթի վերայ, սև թանաքով տպած, չորս երես.

25 օրինակը . . 2-50

Անմիջապէս հեղինակից, Պետերբուրգէն, միանգամից տասը րուբլու վարժութիւններ և տողացանցեր գնել կամեցողները և դրամը կանխիկ վճարողները ամէն մի տասը րուբլու վարժութիւնների և տողացանցերի տեղ կստանան իբրև զիջումն, տասը և երեք րուբլու վարժութիւններ և տողացանցեր, թողլով, միևնոյն ժամանակ, ճանապարհի ծախքը (Պետերբուրգէն), հեղինակի վերայ:

Թիֆլիսում սոյն վարժութիւնները և տողացանցերը հեղինակէ առնողը մի անգամից տասը րուբլու գինով կստանայ Թիֆլիզում տասն և երեք րուբլու վարժութիւններ և տողացանցեր.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.